Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7269

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Պետական միջնակարգ դպրոցների դասընթացին
յարմարացրած

ԿԱԶՄԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԱԳ ՔԱՀ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Կրօնաւոր Թիֆլիզի օրիորդական III գիմնազիօնի

281(=91.54)(09)
Մ-38

ԹԻՖԼԻՍ

Տպարան Վրաց Հրատ. Ընկ. | Типографія Груз. Изд. Т-ва.
Большая Ванкская ул.
1903

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

281(=91.54)(09)
Ս-38
545

Պետական միջնակարգ դպրոցների դասընթացին յարմարացրած

ԿԱԶՄԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԱԳ ՔԱՀ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Կրօնուսոյց Թիֆլիզի օրիորդական III գիմնազիօնի։

36925 1004 31473

ԹԻԶԼԻԶ

Տպարան Վրաց. Հրատ. ընկ. ||| Типографія Груз. Изд. Т—ва.
Большая Ванкская ул.

1903

Գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ — СССР
им. А. Мнацаканяна
Ա. Մնացականյանի անվան

26.06.2013

Дозволено цензурою. Тифлисъ, 5 декабря 1902 года.

Ըստ բարձու հրամանի Նորին Սգ. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. ՄԿՐՏՉԻ, Դիւանս թոյլատրէ տպագրութիւն դասագրքոյս, որ ընդ անուամբս «Հայոց եկեղեցու համառօտ պատմութեան դասագիրք»։

Դիւանապետ Կորիւն վարդապետ։

յ3 Դեկտեմբերի 1902 ամի
ի Տփխիս։

№ 1672.

ՄԻՔԱՆԻ ԽՕՍՔ

ԳՐԲՈՅԿԻՍ ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

Տասը տարի անընդհատ կրօնուսուցչի պաշտօն վարելով Թիֆլիզի օրիորդական երրորդ գիմնազիօնում, մեծ անյարմարութիւնների էի հանդիպում առհասարակ կրօնագիտութեան բոլոր դասագրքերի վերաբերմամբ, նամանաւանդ Հայոց եկեղեցական պատմութեան դասագրքի. որովհետև եղածներից ոչ մինը չէ յարմարացրած պետական դպրոցների տարեկան դասընթացի ծրագրին, ուսանողների զարգացողութեան և մայրենի լեզուի գիտութեան աստիճանին։

Առաջին տարիներում իբրև փորձ ստիպուած էի զանազան հեղինակութիւններից, գլխաւորապէս Յուսիկ վարդապետ (այժմ եպիսկոպոս) Մովսէսեանի և Յովսէփ ա. քահանայ Օրբէլու դասագրքերից միմիայն պատմութեան ամենակարևոր հատուածները քաղուածք անել և բերանացի աւանդել աշակերտուհիներիս, որովհետև իւրաքանչիւր դասարանում յատկացրած լինելով շաբաթական մի-մի դաս, ամբողջ ուսումնական տարում միջին թուով պարապում էի մօտաւորապէս 25—27 դաս, և այս բոլոր դասերը լրիւ չէին լսում ամենքը՝ մերթ աշակերտուհիների, մերթ ուսուցչի բացակայութեան պատճառով հիւանդութեան դէպքերում կամ տօների առիթով։

Այս փորձը յաջողվում էր ինձ միայն սրամիտ և ընդունակ աշակերտուհիների վերաբերութեամբ, մնացածները առանց դասագրքի չատ էին դժուարանում դասերը պատրաստել, որոնց համար իբրև դասագիրք նշանակում էի Օրբէլու եկեղեցական պատմութիւնը և այդ վերջիններից միշտ լսում էի հետևեալ խօսքերը. «Տէր հայր, մեզ տուէք մի գիրք այնպիսի բովանդակութեամբ, ինչպէս որ դուք էք պատմում, այն ժամանակ մենք հեշտութեամբ կը պատրաստենք մեր դասերը։

Աշակերտուհիներիս ցանկութեան համաձայն կազմելով ներկայ «Դասագիրքը», համեմատ մինչև ցայսօր աւանդածս ծրագրի և ուղղութեան, նուիրում եմ նոյն գիմնազիօնի Սանուհիներիս, իբրև սկզբնապատճառի գրքոյկիս լոյս ընծայելուն, և ցանկանում նրանց բոլորին բարոյական զարգացումն Քրիստոնէական հշմարիտ հաւատի, յոյսոյ և սիրոյ մէջ։

Գրքոյկիս վերջը զետեղել եմ նաև մի հատուած «Հայոց նշանաւոր վանքեր» անունով, որովհետև շատ անգամ է պատահում, որ ուսումնարանի դասընթացն աւարտողներից ոմանք մինչև անգամ չեն իմանում թէ որտեղ են գտնվում մեր ամենայայտնի վանքերը և թէ ինչ նշանակութիւն ունեն։ Ցիշեալ հատուածը գրելու ժամանակ օգտուել եմ պ. Կ. Կոստանեանցի «Հայոց վանքեր» անունով գրքից։

Յ. ա. ք. Մ.

ԾՐԱՆ Ա

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

1.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ, ՄԱՏԱԹԻԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅ ԳԱԼՈՒՍԸ

Այն փրկութեան աւետիսը, որ Աստուած խոստացել էր մարդկութեան իւր նահապետների և մարգարէների միջոցով, կատարուեց այն ժամանակ, երբոր Յուդայի ցեղի իշխանութիւնը վերացաւ. այս ժամանակում ծնուեց խոստացուած Փրկիչը Մարիամ ս. Կոյսից սուրբ Հոգւոյ շնորհքով Յուդայի երկրի Բեթղեհէմ քաղաքում մի այրի մսուրի մէջ։ Ութերորդ օրը թլփատուեց համաձայն հրէական օրինաց և անուանուեց Յիսուս, որ նշանակում է Փրկիչ։ Ապա քառասներորդ օրը ընծայուեց տաճարին, ուր ծերունին Սիմէօն առաւ գիրկը և անուանեց նորան «Հեթանոսների Լոյս և Ի-

բայէլի փառք»։ Յիսուս 12 տարեկան հասակում իւր ծնողների հետ գնաց Երուսաղէմի տաճարը և Քահանայապետների ու դպիրների առաջ ցոյց տուեց իւր Աստուածային հանճարը։

Երեսուն տարեկան մկրտուեց Յորդանան գետի մէջ ս. Յովհաննէս Մկրտչից և ապա յայտնեց իւր անձը աշխարհին, քարոզեց մարդկանց սէր և խոնարհութիւն, տուեց նոր ուխտի օրէնքները, գործեց հրաշքներ, շարշարուեց, մեռաւ խաչի վրայ, թաղուեց գերեզմանում և երրորդ օրը յարութիւն առնելով փրկեց ամբողջ մարդկութիւնը, որով և դրեց Քրիստոնէական եկեղեցու հաստատուն հիմը։

Յիսուս Քրիստոսի համբարձումից յետոյ, երբ Նրա առաքեալները վերադարձան Ձիթենեաց սարից, միւս աշակերտների հետ ժողովուեցին Երուսաղէմ և հաւատացեալների միջից ընտրեցին երկու բարեպաշտ անձինք՝ Մատաթիային և Բարսաբային, ապա բոլորը միասին աղօթեցին և խնդրեցին, որ Աստուած յայտնէ թէ ո՞րն է Նրանցից արժանաւորը առաքելական պաշտօնի համար, յետոյ վիճակ գցեցին և վիճակն ընկաւ Մատաթիային, և նա համարուեց տասներկուերորդ առաքեալ՝ մատնիչ Յուդայի փոխանակ։

Պասէքի տօնից յիսուն օր յետոյ, հրէաները Պենտեկոստէի տօնն էին կատարում որպէս յիշատակ Սինայի օրէնսաւորման. այդ օրը (Համբարձումից տասն օր յետոյ) Յիսուսի աշակերտները և միւս հաւատացեալները, որոնց հետ էր նաև Տիրամայրը, թուով 120 հոգի, բոլորը միասին ժողովուած Երուսաղէմի վերնատանը, մի սիրտ և մի հոգի դարձած աղօթում էին և անհամբեր սրտով սպասում սուրբ Հոգւոյ շնորհքն ընդունելու, ինչպէս որ Փրկիչը նրանց խոստացել էր։ Յանկարծ լսուեց մի երկնային ձայն՝ քամու պէս, և շարժեց այն տունը, ուր հաւատացեալներն էին։ Սուրբ Հոգին իջաւ բոլորի վրայ հրեղէն լեզուների նման և Առաքեալները զօրացան սուրբ Հոգւոյ շնորհքով, սկսան խօսել զանազան լեզուներով, ինչպէս որ ս. Հոգին նրանց թելադրում էր։

2.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԱԾՈՒՄՆ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ԵՒ ԵՕԹՆ ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Պենտեկոստէի տօնի օրը՝ երբ Առաքեալները զօրացած սուրբ Հոգւով խօսում էին ամեն լեզուներով, տօնի պատճառով շատ հրէաներ եկած էին Երուսաղէմ. նրանք լսելով առաքեալների խօսակցութիւնը, զարմանում էին: Պետրոս առաքեալը այս ժամանակ սկսեց քարոզել նրանց և բացատրել Յիսուս Քրիստոսի փրկարար վարդապետութիւնը, Նրա մահը և յայտնութիւնը. և այս առաջին քարոզութիւնով 3000 հոգի ընդունեցին քրիստոնէութիւն: Իսկ երկրորդ անգամ երբ Պետրոս և Յովհաննէս առաքեալները ցերեկուայ ինը ժամին գընում էին տաճար աղօթելու՝ Պետրոսը Յիսուս Քրիստոսի անունով բժշկեց 'ի ծնէ կաղին, որ տաճարի դռան մօտ նստած անցուդարձ անողներից ողորմութիւն էր խնդրում: Այդ օրը նոյնպէս իւր ազդու քարոզութիւնով 5000 հոգի դարձրեց քրիստոնեայ. և այս ժամանակ քրիստոնեայ ե-

կեղեցին ամենամեծ յաղթանակով յառաջադիմում էր Երուսաղէմում:

Սրանից յետոյ հաւատացեալների թիւը օրէցօր աւելանում էր առաքեալների քարոզութիւնով և հրաշքներով, որ կատարում էին առաքեալները Յիսուս Քրիստոսի անունով, իսկ նրանց կեանքն ու վարքը այնպէս անարատ էին, որ շատերն էին գրաւվում, որովհետև առաջին հաւատացեալները ապրում էին իբրև մի գերդաստանի անդամներ. ով ինչ ստացուածք ունէր, այն ամենքին էր պատկանում, ամեն բան հասարակաց էր և նրանց բոլորովին միմեանց հետ կապողն էր քրիստոնէական հաւատի ուժունքը, որ նրանց ամենօրեայ մրմունջն էր. նրանք մի սիրտ և մի հոգի դարձած աղօթում էին միասին և ուտում էին հասարակաց սեղանից:

Եւ որովհետև հաւատացեալների թիւը այսպէս զգալի կերպով աճում էր, իսկ առաքեալները չէին կարողանում կատարել միաժամանակ թէ նրանց հոգեկան պիտոյքները և թէ ծառայել հասարակաց սեղանին, ուստի հաւատացեալների միջից ընտ-

բեցին եօթը բարեպաշտ մարդկանց և ձեռք դնելով նրանց գլխին, ձեռնադրեցին սարկաւագ և նշանակեցին հասարակաց սեղանին սպասաւոր, որոնք ազատ ժամերին, իբրև օգնականներ, քարոզում էին հաւատացեալներին Քրիստոսի վարդապետութիւնը: Սրանց մէջ ամենից նշանաւորն էր սուրբ Ստեփաննոս սարկաւագը, որպէս ճարտար և աներկիւղ քարոզիչ:

3.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ, ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱԼԱԾԱՆՔԸ ՀՐԷԱՅ ԵՒ ՀԵԹԱՆՈՍ ԱԶԳԵՐԻՑ

Առաքեալների եռանդուն քարոզութիւններով որքան աւելանում էր հաւատացեալների թիւը, նոյն չափով էլ աւելանում էր Հրէից ազգի նախանձն ու ատելութիւնը դէպի քրիստոնեաները: Հրէից քահանայապետները գրգռուած քրիստոնէական եկեղեցու յառաջադիմութիւնով, իրանց ժողովների մէջ որոշեցին և խիստ հրաման արձակեցին, որ առաքեալները չվստահանան քարոզել Յիսուս Քրիստոսի անունով: Բայց

չնայելով այդ խստութիւններին, աշակերտները դարձեալ շարունակում էին աւետարանական քարոզութիւնները, ուստի և հրէաները՝ նրանց վախեցնելու համար, երկու անգամ բանտարկեցին. սակայն նրանք Աստուածային հրաշքով ազատուեցին բանտից և դարձեալ շարունակում էին իրանց քարոզութիւնը Երուսաղէմի տաճարում և դուրսը:

Այս տեսնելով, քահանայապետները ատեան կազմեցին և կանչելով Յիսուսի աշակերտներին, կամենում էին նրանց մահուան պատիժ տալ. բայց ժողովականներից մէկը, Գամաղիէլ անունով, որ մի օրէնուսոյց փարիսեցի էր, զգուշացնելով նրանց յայտնեց, որ պէտք է թողնել այդ խստութիւնները, որովհետև եթէ առաքեալների կատարած գործերը և նրանց յայտնած մտքերը Աստուածանից է, որքան էլ արգել ենք, այնքան աւելի կը տարածուի, իսկ եթէ իրանց հնարած է՝ ինքն իրան կը ոչնչանայ: Բոլորը հաւանութիւն տուին Գամաղիէլի խօսքին և վճռեցին այս անգամ բաւականանալ միայն թեթև պատիժ տալով, սակայն

խստիւ արգելելով, որ այլևս չշարունակեն իրանց քարոզութիւնը Յիսուս Քրիստոսի անունով։ Առաքեալները աներկիւղաբար պատասխանեցին. «Մենք պարտաւոր ենք աւելի Աստծուն լսել, քան թէ մարդկանց», և դուրս գնալով նրանց մօտից, աւելի ևս եռանդուն կերպով սկսեցին քարոզել քրիստոնէութիւնը։ Այս հալածանքի ժամանակ առաջին նահատակը դարձաւ սուրբ Ստեփաննոսը, եօթը սարկաւագներից մինը։ Երբ նորան քարկոծում էին, նա իբրև ճշմարիտ հետևող Քրիստոսի, աղօթում էր իրան քարկոծողների համար ասելով. «Տէր, ներիր սրանց, որովհետև չգիտեն՝ թէ ինչ են անում»։ Սուրբ Ստեփաննոսի յիշատակը մեր եկեղեցին տօնում է դեկտեմբերի վերջերումը, Յիսուսի ծննդեան տօնից առաջ։ Ապա նահատակուեցին Յակոբոս առաքեալը և Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Յակոբոս Տեառնեղբայրը։

4.

ՍՈՂՈՍԻ ԴԱՐՁԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒԵԼԸ ՍԱՄԱՐԻԱՅՈՒՄ ԵՒ ԿԵՍԱՐԻԱՅՈՒՄ

Սուրբ Ստեփաննոսի մահից յետոյ, քրիստոնէական եկեղեցին սաստիկ հալածվում էր, ուստի բոլոր հաւատացեալները ցրուեցին Երուսաղէմից և գնացին զանազան քաղաքներ բացի առաքեալներից, որոնք մնալով այնտեղ, համարձակ և աներկիւղ քարոզում էին քրիստոնէութիւնը։ Այս հալածանքի ժամանակ կար մի տարօնացի հրէայ երիտասարդ, Սողոս անունով, որ ս. Ստեփաննոսի նահատակութեան ժամանակ ներկայ էր. սա այնքան էր ատում Քրիստոսի աշակերտներին և առհասարակ բոլոր հաւատացեալներին, որ աշխատում էր բոլորովին ջնջել նրանց երկրի երեսից. նա քրիստոնեաներին իրանց տներից դուրս էր քաշում և բանտարկում։ Սրանով չբաւականացած, երբ իմացաւ, որ հաւատացեալների մեծ բազմութիւն է գտնվում Դամասկոսում, քահանայապետից հրաման ստացաւ, որ այնտեղից նրանց կապած բերի Երուսաղէմ, և երբ նա իւր մարդկանցով գնում էր Դա-

մասկոս, յանկարծ երկնքից մի լոյս փայլեց ու ընկաւ գետնի վրայ և երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Սողոս, Սողոս, ինչո՞ւ ես ինձ հալածում»: Սողոսը հարցրեց. «Ո՞վ ես դու, որին ես հալածում եմ»: Ձայնը պատասխանեց. «Ես Յիսուսն եմ, որին դու հալածում ես»: Այս տեսիլքից յետոյ Սողոսը ուշքի գալով հարցրեց. «Տէր, ի՞նչ ես կամենում, որ ես անեմ», դարձեալ ձայն եկաւ երկնքից և ասաց. «Վե՛ր կաց, գնա՛ Դամասկոս և այնտեղ կը գտնես Յիսուսի աշակերտ Անանիային, նրանից կը մկրտուես և նա քեզ կը սովորեցնի, թէ ինչ պէտք է անես»:

Այս տեսիլքից յետոյ Սողոսը կուրացաւ, նրա մարդիկը ձեռքից բռնած տարան Դամասկոս, ուր նա երեք օր ո՛չ ուտում էր, ո՛չ խմում, մինչև որ Անանիան, Յիսուսի աշակերտը, Աստուածային ցուցմամբ եկաւ նրա մօտ, բժշկեց նրա աչքերը և մկրտեց: Սողոսը Պօղոս անուանեց և մնաց Դամասկոսում եղող հաւատացեալների մօտ. նա սկսեց քարոզել Քրիստոնէութիւնը, և շուտով դարձաւ գլխաւոր առաքեալներից մինը:

Սամարիայում քրիստոնէութիւնը քարոզում էր Փիլիպպոսը, որ եօթը սարկաւագներից մինն էր. նա այնտեղ շատերին քրիստոնեայ դարձնելով՝ մկրտեց: Երբ առաքեալներն այդ լսեցին՝ Երուսաղէմից Սամարիա ուղարկեցին Պետրոսին և Յովհաննէսին, որոնք ձեռք դնելով հաւատացեալների վրայ, տալիս էին դրոշմի խորհուրդը, որով և հաւատացեալների վրայ իջնում էր ս. Հոգւոյ շնորհքը: Սամարիայում հաւատացեալների թւում կար մի մոգ՝ Սիմոն անունով. սա երբոր տեսաւ թէ Պետրոսն ու Յովհաննէսը ում վրայ ձեռք են դնում, իջնում է նրա վրայ ս. Հոգւոյ շնորհքը, կամեցաւ կաշառքով գնել այդ արտօնութիւնը և ստանալ իրաւունք, որ եթէ ինքն էլ ձեռք դնէ մի որևէ մարդու գլխին՝ ս. Հոգին իջնի: Պետրոս առաքեալը արհամարհելով այդ անարժան խնդիրը, մերժեց: Դրանից յետոյ՝ Աստուածային շնորհքը վաճառողներն ու գնողները կոչուեցին սիմոնականք Սիմոն մոգի անունով: Ապա ուրացաւ նա իւր հաւատը և սկսեց զանա-

3625 1007/31473

Պետ. Հանրային գրադարան Гос. Публ. Библиотека ՀԱՅԿ.—СССР им. А. Мясникяна

զան ժողովութիւններ քարոզել և համարուեց գլխաւոր հերձուածող։

Հրէութիւնից դարձած հաւատացեալներն սկզբումը կարծում էին, թէ քրիստոնէութիւնը կարող են ընդունել միայն Մովսիականները. բայց Աստուած մի առանձին տեսիլքով բաց արաւ Պետրոս առաքեալի միտքը, որ իմանայ թէ հեթանոսների համար ևս բաց է քրիստոնէական եկեղեցու դուռը։

Պաղեստինիայի Կեսարիա քաղաքում մի հարիւրապետ կար, Կուռնէլիոս անունով։ Նա թէպէտ այլազգի էր, բայց լինելով բարեպաշտ մարդ, Աստուած նրա աղօթքը լսում էր և տուած ողորմութիւն ընդունում։ Մի անգամ երբ նա աղօթում էր Աստծուն, հրեշտակը երևաց և ասաց. «Կուռնէլիոս, մարդ ուղարկիր և որոնիր Պետրոսին, որ նա գայ և սովորացնի քեզ թէ ինչ պէտք է անես»։ Կուռնէլոսն իսկոյն ուղարկեց իւր մարդիկը Յոպպէ քաղաքը՝ հրաւիրելու Պետրոս առաքեալին։ Դեսպանները երբ մօտեցան քաղաքին, Պետրոսը բարձրացել էր տանիքի վրայ և աղօթում էր։

Յանկարծ երկինքը բացուեց և մի մեծ անօթ կտաւի պէս իջաւ նրա առաջ, որի մէջ կային ամեն տեսակ չորքոտանի կենդանիներ, սողուններ և թռչուններ և երկնքից ձայն լսուեց, որ ասում էր. «Պետրոս, ժորթիր և կեր»։ Պետրոսն ասաց. «Ո՛չ, Տէր, մինչև այսօր պիղծ բան չեմ կերած և հիմա էլ չեմ ուտիլ»։ Ձայնը դարձեալ կրկնեց և ասաց. «Այն, որ Աստուած սրբել է, դու իրաւունք չունիս պիղծ համարել» և ապա անօթը վեր բարձրացաւ։

Մինչդեռ Պետրոսը զարմացած մտածում էր այս տեսիլքի վրայ, եկան Կուռնէլիոսի ուղարկած մարդիկը և հրաւիրեցին նրան Կեսարիա։ Կուռնէլիոսի մօտ ժողովուած էին նրա բոլոր ազգականներն ու բարեկամները, երբ Պետրոսը Կուռնէլիոսի տունը մտաւ. նա նրանց քարոզեց և պատմեց Յիսուսի տնօրէնութիւնների մասին։ Քարոզելու ժամանակ ս. Հոգին իջաւ ամենքի վրայ։ Ապա Պետրոսը Յիսուս Քրիստոսի անունով մկրտեց Կուռնէլիոսին և նրանց բոլորին, որոնք նրա մօտ էին և ամենքը փառաբանում էին Աստծուն։

5.

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՀԻՄՆԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Պօղոս առաքեալն սկսեց իւր ճանապարհորդութիւնը Դամասկոս քաղաքից, իւր դարձից երեք տարի յետոյ։ Հրէաները տեսնելով, որ Պօղոսը փոխանակ քրիստոնեաներին հալածելու, իւր քարոզութեամբ աւելի ևս հաստատում է նրանց քրիստոնէական հաւատի մէջ, պահապաններ դրին քաղաքի դռների մօտ, որ բռնեն նրան և սպանեն. բայց հաւատացեալները գիշերով պարսպից ցած թողին և նա ազատուելով փախաւ Երուսաղէմ, ուր դարձեալ շարունակեց իւր քարոզութիւնը. այնտեղից գնաց իւր հայրենի Կիլիկիայի Տարսոն քաղաքը, իսկ այդտեղից տուրբ Բառնաբասի հետ գնացին Անտիոք։ Անտիոք քաղաքում հաւատացեալների թիւը հետզհետէ մեծանում էր. ահա այդ քաղաքում՝ առաջին անգամ՝ Քրիստի հաւատացեալներն ստացան «քրիստոնեայ» անունը։ Անտիոքից Պօղոսը և Բառնաբասը գնացին Երուսաղէմ 51—52 թ., տանելով իրանց հետ այնտեղի հաւատացեալների տուրքը և

յետոյ կրկին վերադառնալով Անտիոք 52 թ. ճանապարհ ընկան դէպի Կիպրոս և Փոքր-Ասիայի կողմերը և այնտեղի եկեղեցիները հաստատեցին 52—53 թ.։

Երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ Պօղոսն ու Բառնաբասը բաժանուեցին։ Պօղոսը միայնակ գնաց և այցելեց իւր հիմնած եկեղեցիները և նրանց աւելի հաստատեց քրիստոնէական հաւատի մէջ և նոր եկեղեցիներ հիմնեց Մակեդոնիայում և Յունաստանում։

Երրորդ ճանապարհորդութեան ժամանակ Պօղոսը երկու տարուց աւելի քարոզեց Եփեսոսում. ապա Ասիայի զանազան կողմերում քարոզելուց յետոյ գնաց Երուսաղէմ, ուր հազիւ կարողացաւ ազատուել հրէաների ձեռքից, որ կամենում էին նրան սպանել։ Հռովմայեցոց հազարապետը, նրան ազատելով մահից, ուղարկեց, ինչպէս Հռովմայ քաղաքացու՝ Կեսարիա, Փելիքս դատաւորի մօտ, ուր երկու տարի մնաց բանտի մէջ և ապա դատաւորի մահից յետոյ ուղարկուեց Հռովմ։ Այդտեղ ևս Պօղոսը երկու տարի շարունակ քարոզեց և շատերին հեթա-

նոններից դարձնելով քրիստոնեայ՝ կոչուեց հեթանոսների առաքեալ։

Քրիստոնէութեան առաջին դարում Հռովմայեցոց կայսրներից Ներոնը եղաւ առաջինը, որ սաստիկ հալածանք սկսեց քրիստոնեաների դէմ։ Դրա պատճառն այն էր, որ 65 թուին մեծ հրդեհ պատահեց Հռովմում և այրուեց քաղաքի երրորդ մասը. ժողովուրդը յանցաւոր էր համարում Ներոնին, սա էլ իւր կողմից մեղադրում էր քրիստոնեաներին, որ կարողանայ ժողովրդին գրգռել դէպի նրանց։ Հալածանքն սկսուեց նախ Հռովմի մէջ և ապա տարածուեց գաւառները. այդ ժամանակ շատ անմեղ քրիստոնեաներ բռնուեցին և անտանելի տանջանքներով նահատակուեցին։ Պետրոս և Պօղոս առաքեալները զանազան կողմեր քարոզելուց յետոյ 64 թուին Հռովմում նահատակուեցին. Պօղոսը գլխատուեց, իսկ Պետրոսը խաչուեց։ Առաքեալները ցրուելով զանազան երկիրներ, քարոզում էին սուրբ Աւետարանը և իւրաքանչիւրը նահատակուեց իւր քարոզած տեղում։

6.

ՅԻՍՈՒՍԻ ՄԻԻՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ

Սուրբ Յովհաննէս առաքեալը մինչև ս. Կոյսի վերափոխումն, ապրում էր նրա հետ միասին Երուսաղէմում, ինչպէս որ Փրկիչը յանձնել էր իւր խաչի վրայ եղած ժամանակ։ Յետոյ գնաց Փոքր-Ասիայի կողմերը և երկար ժամանակ քարոզելով, հաստատեց Եփեսոսի եկեղեցին և մեռաւ մօտաւորապէս հարիւր տարեկան հասակում բնական մահով։ Սուրբ Անդրէաս քարոզելով զանազան երկիրներում, խաչակից եղաւ Քրիստոսին. ս. Փիլիպպոս Տրայիանոսի հալածանքի ժամանակ նահատակուեց ուլթսուն և եօթը տարեկան հասակում. ս. Թովմաս Մարաց և Պարսից կողմերը քարոզելուց յետոյ գնաց Հնդկաստան, ուր և մեռաւ փառաւոր մահով. ս. Բարդուղիմէոս քարոզեց Հայաստանում և դառն տանջանքներով Սանատրուկ թագաւորի հրամանով ժորթաղերծ եղաւ. ս. Մատթէոս աւետարանիչը քարոզելով շատ բարբարոս ազգերի մէջ, նահատակուեց նրանցից. ս. Յակոբ Ալփիա, նահատակուեց Ասորոց երկրում. ս. Մատա-

թիա, որ վիճակով ընտրուեց, նահատակուեց Հրէաստանում. իսկ Զեբեդիայի որդի Յովհաննէս աւետարանչի եղբայր Յակոբոսը նահատակուեց սրով Հերովդէս Ագրիպպայի ձեռքով: Սիմոն Կանանացին, Յուդայ Յակոբեան և Ղեբէոս կամ Թադէոսը նահատակուեցին Ասիայի զանազան կողմերում:

ԳՐՔԱՆ Բ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

7.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՆԱԽԿԻՆ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆԵՐ.—Ս. ՈՍԿԵԱՆՑ ԵՒ ՍՈՒՔԻԱՍԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Եդեսիայի Հայոց թագաւոր Աբգարը իւր դեսպաններից լսելով, որ Յիսուս Երուսաղէմում քարոզում է, մարդկանց բժշկում է առանց դեղի ու դրամի և մինչև անգամ մեռեալներին յարութիւն է տալիս, իսկոյն հաւատաց, որ Նա Աստուած է կամ Աստուծոյ որդի: Լսեց նաև այն, որ Հրէից մեծամեծները Նրանից դժգոհ լինելով, կամենում են սպանել տալ, և որովհետև ինքը մի անբուժելի հիւանդութիւն ունէր, ուստի նամակ գրեց Փրկչին՝ խնդրելով որ Նա գայ Եդեսիա իւր մայրաքաղաքը, իրան բժշկի և իւր ընտանիքի հետ մկրտի. տպա իւր մօտ ապրի՝ խաղաղ և հանգիստ կեանք

վարելով։ Այս նամակը Աբգարն՝ ուղարկում է դեսպանների ձեռքով Երուսաղէմ, նոյնպէս և մի պատկերահան, որ եթէ Փրկիչը չգայ, պատկերը հանեն և բերեն։ Դեսպանները հասան այն օրը, երբ Յիսուս Քրիստոս մեծ հանդէսով մտնում էր Երուսաղէմ։ Նրանք չկարողանալով անձամբ մօտենալ և նամակը տալ Յիսուսին, առաքեալների միջոցով տուին Նրան։ Յիսուս Քրիստոս տեսնելով Աբգարի մեծ հաւատը, արժանացրեց Իւր պատասխանին, երանի տալով նրան, որ առանց տեսնելու հաւատում է. խոստացաւ Իւր համբառնալուց յետոյ Իւր աշակերտներից մէկին ուղարկել, որ բժշկի նրան և քրիստոնէական հաւատով լուսաւորի։

Յիսուս Իւր գրաւոր պատասխանի հետ ուղարկեց Աբգարին նաև Իւր անձեռագործ պատկերը, որ Աբգարն ստանալով երկրպագութիւն տուաւ և պահելով իւր մօտ, սպասում էր Յիսուսի խոստման կատարելուն։ Այդ պատկերը կոչուեց դաստառակ Քրիստոսի։

Յիսուս Քրիստոսի համբառնալուց յետոյ

Թովմաս առաքեալը՝ Փրկչի 33 թուին, Յիսուսի պատուէրի համաձայն, Թադէոսին, որ եօթանասուն աշակերտներից մինն էր, ուղարկեց Եդեսիա՝ բժշկելու Աբգարին և քարոզելու քրիստոնէութիւնը։ Երբ Թադէոսը մտաւ Եդեսիա, Աբգարը դուրս եկաւ նրա առաջ. Թադէոսը ձեռքը դնելով նրա գլխին բժշկեց, մկրտեց նրան, նրա հետ և շատերին՝ թագաւորական տանից, նախարարներից և ժողովրդից, քանդեց կռատունները և նրանց տեղ հաստատեց քրիստոնէական եկեղեցիք։ Ս. Թադէոսը թագաւորի թագ կարող Ադդէին եպիսկոպոս ձեռնադրեց, կարգեց Եդեսացոց վրայ հովիւ և Աբգարի հրամարտակով գնաց քարոզելու վերին Հայաստանի կողմերը, ուր կուսակալ էր Աբգարի քեռորդի Սանատրուկը, որին մկրտեց իւր ընտանիքով։ Այդտեղ էլ ձեռնադրեց եպիսկոպոս Զաքարիա անունով մէկին, կարգեց նրանց վրայ հովիւ և գնաց քարոզելու Աղուանից և Կապադովկիայի կողմերը։

Աբգար թագաւորը քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ, թուղթ գրեց Հռովմայե-

ցոց կայսեր, Ասորոց և Պարսկաստանի թագաւորներին և յորդորում էր նրանց ընդունել քրիստոնէութիւնն ու ազատութիւն շնորհել քրիստոնեաներին իրանց երկիրներում. սակայն դեռ ևս պատասխան չստացած՝ վախճանվում է: Աբգարի մահից յետոյ քրիստոնէութիւնը թուլանում է Հայաստանում, յաջորդները՝ նրա որդի Անանէն և թեռորդի Սանատրուկը ուրացան քրիստոնէութիւնը: Անանէն նահատակել տուաւ Աղդէին, որովհետև չուզեց նրա համար թագ կարել, իսկ Սանատրուկը նահատակեց իւր աղջիկ Սանդուխտ կոյսին, որ չուրացաւ քրիստոնէութիւնը և հրամայեց Աբգարի բոլոր ազգատոհմը ջնջել, որպէսզի ինքն ազատ կերպով թագաւորէ ամբողջ Հայաստանի վրայ: Այս լուրը Թադէոս առաքեալը լսելուն պէս Կապադովկիայից վերադարձաւ դէպի Հայաստան, ճանապարհին նրան պատահեցին Հռովմայեցի հինգ դեսպան, որոնք գնում էին Սանատրուկի մօտ: Թադէոս առաքեալը նրանց քարոզեց, բոլորին մկրտեց և նրանց գլխաւորին, որի անունն էր Ոսկի, ձեռնադրեց քահանայ: Ոսկու անունով նրա ընկերները

կոչուեցին Ոսկեանք: Երբ Սանատրուկը լսեց այս, կանչեց Թադէոսին Շաւարշան քաղաքը և այնտեղ սպանել տուաւ:

Ս. Թադէոսի նահատակութիւնից յետոյ ս. Բարդուղիմէոս առաքեալը, որ երկոտասան աշակերտներից էր, Մարիամ ս. Կոյսի մահից յետոյ նրա պատկերը հետն առած եկաւ Հայաստան, սկսեց քարոզել և հաւատացեալների թիւը հետզհետէ աւելացնել, յետոյ Տիգրիս գետի ափին մի եկեղեցի շինեց ս. Կոյսի անունով, բազմեցրեց այնտեղ Տիրամօր պատկերը և շարունակեց իւր քարոզութիւնը: Սակայն սա ևս երկար ժամանակ չկարողացաւ քարոզել Հայաստանում. Սանատրուկը սրան ևս նահատակել տուաւ, այնպէս որ թէպէտ ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները չկարողացան ամբողջ հայ ազգը քրիստոնեայ դարձնել, այնուամենայնիւ նրանց քարոզութիւնը և թափած արիւնը Հայաստանի հողի վրայ անօգուտ չանցան: Դրանք էին որ առաջին անգամ Հայաստանում քրիստոնէական եկեղեցու հիմը դրին, ուստի և մեր եկեղեցին անուանւում է դրանց Հայոց եկեղեցու

առաջին լուսաւորիչներ և որոնց յիշատակը տօնում է ամեն տարի դեկտեմբերի սկզբներին:

Սուրբ Ոսկեանը քրիստոնէութիւնն ընդունեցին Թադէոս առաքեալից. նրանք Թադէոսի մահից յետոյ 43 տարի ճգնում էին Եփրատ գետի ափին: Նրանց քարոզութեամբ Սաթինիկ թագուհու միքանի ազգականները, որոնք եկել էին Ալանաց երրից, ընդունեցին քրիստոնէութիւն և Եփրատ գետի մէջ մկրտուելով, ս. Ոսկեանց հետ գնացին անապատ և այնտեղ ճգնում էին 15 տարի. դրանք ընդամենը տասն և եօթը հոգի էին և իրանց գլխաւորի անունով կոչուեցին Սուքիասեանք:

Հայոց Արտաւազդ թագաւորը 107 թ. շատ աշխատեց դարձնելու դրանց կռապաշտ, բայց չկարողացաւ, և երբ իմացաւ թէ դրանց քրիստոնեայ դառնալու պատճառը եղել են Ոսկեանք, զօրք ուղարկեց և նահատակել տուաւ նրանց: Սուքիասեանք թաղեցին նրանց մարմինները և իրանք շարունակեցին ճգնել այրի մէջ: Դրանից յետոյ տեղափոխուելով Բագրևանդ գաւառի Սուկաւետ

լեառը, քսան տարի էլ այնտեղ ճգնեցին և 130 թուին նահատակուեցին Ալանաց արքայորդու հրամանով քրիստոնէական հաւատի մէջ հաստատ մնալու համար:

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԾՆՈՒՆԴԸ.—ԱՆԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼԸ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԽՈՐ ՎԻՐԱՊ ՁԳՈՒԻԼԸ

Հայաստանի երկրորդ լուսաւորիչն է ս. Գրիգորը, որ ծնուեց 257 թուին Արտաշատում: Սրա հայրը Անակ նախարարն էր, հեթանոս, Պահլաւունեաց ցեղից: Պարսից Սրտաշիր թագաւորը յաղթուելով Հայոց Խոսրով թագաւորից, աշխատում էր գտնել մի հնար, որով կարողանար Խոսրովից իւր վրէժն առնել և ահա առաջարկեց իւր պալատականներին. «Ով որ կարողանայ սպանել Խոսրովին, խոստանում եմ նրան դարձնել իմ երկրորդը»: Անակ Պահլաւունի նախարարը խոստացաւ կատարել Արտաշիր ցանկութիւնը, վերցրեց իւր ընտանիքը և գնաց Խոսրովի մօտ իբրև փախստական Արտաշրից: Խոսրովը չիմանալով նրա գալու

բուն նպատակը, սիրով ընդունեց և երբ մի օր գնում էր որսի, Անակին ևս իր հետ տարաւ որպէս մտերիմ բարեկամի. բայց Անակն այդ օրը խորամանկութեամբ առանձնացնելով Խոսրովին, յարձակուեց նրա վրայ և սպանեց: Անակը փախչելիս՝ Երասխ գետի կամրջի վրայ հայոց զօրքից շրջապատուեց. ուստի և զօրքից ազատուելու համար ընկաւ գետը և խեղդուեց: Խոսրովը դեռ ևս չմեռած հրամայել էր Անակին իր ընտանիքով կոտորել. այդպէս էլ կատարուեց, միայն ազատուեցին երկու որդի, մեծը՝ որի անունն էր Սուրէն, փախցրին Պարսկաստան, իսկ փոքրը՝ որ հազիւ երկու տարեկան էր, իր ծծմայր Սոֆիան փախցրեց Կեսարիա, այնտեղ մկրտել տուաւ և անուանեց Գրիգոր, որ զարգացաւ քրիստոնէական հաւատքի մէջ և 276 թուին ամուսնացաւ Դաւիթ անունով մի հաւատացեալի Մարիամ աղջկայ հետ և ունեցաւ երկու որդի՝ Վրթանէս և Արիստակէս:

Խոսրովի մահից յետոյ Արտաշիրը զօրքով մտաւ Հայաստան, երկիրը քարուքանդ արաւ և հրամայեց բոլորովին ջնջել Խոսրովի

ցեղը, սակայն այդ կոտորածից ազատուեցին Խոսրովի երկու զաւակները՝ Տրդատ և Խոսրովիդուխտ. վերջինիս փախցրին Անի, իսկ Տրդատին Կեսարիա և այնտեղից Հռոմ, ուր Տրդատը մեծանում էր կայսեր պալատում Լիկինոս իշխանի ձեռքի տակ:

Գրիգորը երբ իմացաւ Խոսրովի և նրա ընտանիքի անիրաւ սպանութեան մասին, որ կատարուել էր իր հօր ձեռքով 280 թ., գնաց Հռոմ և Տրդատին ծառայութիւն էր անում, որպէսզի դրանով կարողանայ իր հօր յանցանքը թեթևացնել. նրա կին Մարիամը իր փոքր որդի Արիստակէսի հետ մտաւ կուսանոց, իսկ Վրթանէսը մնաց Կեսարիայում, ուր և ամուսնացաւ և ունեցաւ երկու որդի՝ Գրիգորիս և Յուսիկ:

Տրդատը իր քաջութեամբ կարողացաւ գրաւել Դիոկղետիանոս կայսեր սիրտը, ուստի 286 թ. ստանալով Հայաստանի թագաւորութիւնը, հռոմէական զօրքով եկաւ Հայաստան՝ իր հօր գահը ժառանգելու, և երբ հասաւ Եկեղեաց գաւառի Երիզա գիւղը, ուր գտնվում էր Հայոց ամենամեծ չաստուածուհու՝ Անահիտի կուռքը, Տրդատը

շնորհակալութեան զոհեր արաւ, պսակներով զարդարեց կուռքը և Գրիգորին ևս հրամայեց նոյնը անել. սակայն Գրիգորը, որ մինչև այդ ժամանակ իւր քրիստոնէութիւնը ծածուկ էր պահում, բացարձակ մերժեց Տրդատի առաջարկութիւնը, ասելով՝ թէ ինքը քրիստոնեայ է, ուստի չի կարող կուռքին երկրպագութիւն տալ: Տրդատը սաստիկ բարկանում է և խիստ յանդիմանութիւններով աշխատում է համոզել. բայց երբ Գրիգորը հաստատ մնաց իւր խօսքին, հրամայեց տանջել նրան, և երբ յետոյ յայտնեցին, որ նա իւր հօր սպանողի՝ Անակի որդին է, հրամայեց կապել ձեռք ու ոտքը և տանել ձգել Արտաշատի խոր վիրապը, ուր ձգում էին մահապարտներին: Սուրբ Գրիգորը մնաց վիրապի մէջ 15 տարի, այն է՝ 286—301 թ.: Եւ ինչպէս աւանդութիւնն ասում է՝ մի կին օրական մի հաց ու ջուր էր տալիս, և նա ապրում էր այնտեղ:

9.

Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԻՐԱՊԻՑ ԴՈՒՐՍ ԵԼՆԵԼԸ

Այն ժամանակներում, երբ ս. Գրիգորը Արտաշատի մահապարտների վիրապի մէջ էր, Հռովմայեցոց Դիոկղետիանոս կայսեր հալածանքից ազատուելու համար Հռովմից եկան Հայաստան 37 կոյս: Դրանք ընդամենն էին 75 հոգի, որոց թուում կային և քահանաներ, ապրում էին Հռովմի մօտ գտնուած Գայիանէ մայրապետի կուսանոցում նրա խնամատարութեան տակ: Այստեղ էր նաև երանելի իշխանազն Հռիփսիմէ ս. կոյսը, որ հռչակուած էր իւր բարեպաշտ կեանքով, զարդարուած Աստուածային իմաստութեամբ և հրաշալի գեղեցկութիւնով: Ս. Գայիանէ կոյսը զգալով, որ վտանգը մօտ է, վերցրեց Հռիփսիմէին իւր բոլոր ընկերուհիներով և փախան գնացին Երուսաղէմ, երկրպագեցին սուրբ տեղերին, իսկ այնտեղից գնացին Վասպուրականի Վարագ սարը, ուր ս. Հռիփսիմէն թաղեց գետնի մէջ այն խաչը, որ կրում էր իւր վզին: Այստեղից 37 հոգուով գնացին Վաղարշա-

պատ և իջևանեցին քաղաքի ծայրում գըտնուած այգիների մէջ մի հնձանում և այդտեղ ապրում էին իրանց ձեռքի աշխատանքով: Դիոկղետիանոսը յանձնարարական թղթեր գրեց զանազան երկիրների թագաւորներին, մի թուղթ ևս գրեց մեր Տրդատ թագաւորին, առաջարկելով հալածել քրիստոնեաներին:

Տրդատը երբ Դիոկղետիանոսից ստացաւ յիշեալ թուղթը, մարդիկ ուղարկեց՝ որոնելու քրիստոնեաներին, և նրանք գտան Վաղարշապատի հին հնձաններից մէկի մէջ. իսկոյն յայտնեցին թագաւորին, պատմելով նաև ս. Հռիփսիմէի աննման գեղեցկութեան մասին: Տրդատը հրամայեց իւր արքունիքը բերել նրան, ուղարկած մարդիկ գնացին և ձեռնունայն վերադարձան, որովհետև ս. Հռիփսիմէն չցանկացաւ գնալ: Այն ժամանակ թագաւորը բռնի կերպով տարաւ. թագաւորը տեսնելով ս. Հռիփսիմէի հրաշալի գեղեցկութիւնը, կամեցաւ ամուսնանալ նրա հետ, բայց ս. կոյսը այս անգամ ևս չհնազանդելով նրա կամքին, ազատուեց նրա ձեռքից և փախաւ գնաց իւր

ընկերուհիների մօտ: Թագաւորը յոյսը դրեց Գայիանէի վրայ և առաջարկեց, որ նա համոզէ Հռիփսիմէին. սակայն Գայիանէն հակառակ թագաւորի ցանկութեան համոզեց ս. կոյսին՝ հաստատ մնալ իւր խոստման և անարատ պահել իւր կուսութիւնը:

Երբ Տրդատը տեսաւ, որ իւր ջանքերը իզուր անցան, յուսահատուեց և հրամայեց դառն տանջանքներով նահատակել բոլոր կոյսերին: Թագաւորի հրամանը կատարուեց. դահիճները եկան և բոլորին կոտորեցին Փրկչի 301 թ.: Նահատակուած ս. կոյսերի մարմինները մնացին անթաղ ինն օր:

Տրդատը իւր այս խստասրտութեան համար ստանում է իւր պատիժը. նա մտատանջութիւնից կորցնում է մարդկային բանականութիւնը, և երևակայելով թէ ինքը խոզ է դարձել, խելագարուածի պէս ճահիճների և տղմերի մէջ է թափառում: Տրդատի քոյր Խոսրովիդուխտը երազումը տեսնում է Աստուծոյ հրեշտակին, որ յայտնում է թէ Տրդատին կարող է բժշկել միմիայն Գրիգորը, որ գտնվում է Արտաշատի խոր վիրապի մէջ: Երազը սկզբումը շատ անհաւատալի

էր երևում, որովհետև ոչ ոք չէր կարծում, թէ Գրիգորը կարող էր վիրապում 15 տարի կենդանի մնալ, բայց երբ միքանի անգամ կրկնուեց, իսկոյն Օտայ նախարարին ուղարկեցին Արտաշատ, որ տեսներով թէ ս. Գրիգորը կենդանի է, հանեց նրան վիրապից, ուր 15 տարի Աստուածային հրաշքով ապրել էր, և բերեց Վաղարշապատ: Այդտեղ քաղաքից բաւական հեռու դիմաւորել էր նրան խելագարուած Տրդատը իւր նախարարներով և ժողովրդով. դրանք ամենքն էլ ս. Գրիգորին հաւատով՝ ջերմեռանդութեամբ երկրպագութիւն տուին: Ս. Գրիգոր աղօթքով բժշկեց հիւանդ թագաւորին և ուրիշներին և ապա սկսեց քարոզել: Դրանից յետոյ հարցուփորձ անելով ս. կոյսերի նահատակութեան մասին՝ ամենից առաջ ժողովեց նրանց մարմինները և իրանց պատառոտուն զգեստների մէջ փաթաթելով, ամփոփեց նրանց հէնց իրանց նահատակուած տեղում: Ս. Գրիգորը պատուիրեց՝ Տրդատին և բոլոր ժողովրդին ապաշխարել՝ հինգ օր ծոմ և պահք պահելով. իսկ ինքը 66 օր շարունակ քարոզում

էր, որից յետոյ կատարելապէս բժշկեց Տրդատին և բոլոր հիւանդներին: Այնուհետև ս. Գրիգորը Տրդատի, նրա կին Աշխէն թագուհու և քոյր Խոսրովիդխտի հետ շինեցին նահատակուած կոյսերի գերեզմանների վրայ ս. Հռիփսիմէի, ս. Գայիանէի և այժմեան Եղեկաթ կոչուող երեք վանքերը՝ որոնք այժմ կանգուն են ս. Էջմիածնի մօտ:

10.

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՏԵՍԻԼՔԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՁԵՌՆԱԴՐՈՒԵԼԸ

Սուրբ Գրիգորը երբ ոգևորուած քրիստոնէական հաւատով՝ քարոզում էր ժողովրդին Վաղարշապատի արքունիքի մօտ, երազ է տեսնում, որ մի լուսեղէն մարդ իջնում է երկնքից և Վաղարշապատ քաղաքի մէջտեղը խփում է ոսկէ մուրճով, գետինը դղրդում է և խորքերից լսվում են զանազան ձայներ, ապա տեսնում է թագաւորական պալատի վրայ մի ոսկեայ պատուանդան, նրա վրայ լուսեղէն գմբէթ, իսկ գմբէթի ծայրին փայլում է խաչը: Ս. Գրիգորը, որ մտածում էր տեսիլքի մա-

սին, երևաց Աստուծոյ հրեշտակը և բացատրեց նրա նշանակութիւնը. թէ իջնող լուսեղէն մարդը՝ է մեր Տէր Յիսուս Քրիստոսը, Աստուծոյ միածին Որդին, իսկ պալատի վրայ յայտնուած լուսեղէն գմբէթը և խաչը նշանակում է, թէ Աստուած դրանով ցոյց է տալիս, որ այդտեղ պէտք է շինել եկեղեցի: Ս. Գրիգորն շտապեց յայտնել այս բոլորը Տրդատին. իսկ այնտեղը, ուր իջել էր Միածին Որդին, որմով պատեց՝ եկեղեցի շինելու համար:

Ս. Գրիգորը Տրդատին և նրա հետ հայ ժողովրդի մեծագոյն մասին քրիստոնէական հաւատի մէջ հաստատելուց յետոյ, շրջեց Հայաստանի ամենայն կողմերը, կործանեց հեթանոսական կռատունները՝ նրանց տեղ հաստատելով քրիստոնէական եկեղեցի, և ապա առաջարկեց, որ Քրիստոսի այդ նոր հաւատացեալ ժողովուրդը ընտրի իւր համար մի հովիւ, որ նրանց մկրտէ և հոգևոր ծէսերը կատարէ:

Տրդատը նախարարներից և բոլոր ժողովրդի ներկայացուցիչներից ժողով կազմեց և միաձայն հաւանութեամբ ընտրեցին ս. Գրի-

գորին Հայոց հովուապետ: Տրդատը ս. Գրիգորին 302 թ. մեծ հանդէսով ուղարկեց Կեսարիա քաղաքը, ուր նա ձեռնադրուեց ս. Ղևոնդիոս հայրապետից Հայոց առաջին քահանայապետ և կաթողիկոս և ս. Թադէոս առաքեալի յաջորդ:

Ս. Գրիգորը երբ մեծ պատուով վերադառնում էր Կեսարիայից, Ղևոնդիոս պատրիարգից ստացաւ ս. Յովհաննու Կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի մասունքները: Ս. Գրիգորը բերաւ իւր հետ նաև Անտոն և Կրոնիդէս կրօնաւորներին՝ Հայաստանում կրօնաւորական կարգը տարածելու: Երբ հասաւ Տարոն գաւառի Ինակեան կոչուած տեղը, կուռքերի շատ արձաններ կործանեց և նրանց տեղ կանգնեցրեց Քրիստոսի սուրբ Խաչը: Նա այդտեղ մի վանք ևս շինեց ս. Կարապետի անունով. դրաւ այնտեղ Յովհաննու Կարապետի մասունքը, թողեց հետը բերած կրօնաւորներին և նորակառոյց վանքի համար նշանակեց վանահայր Զենոբ եպիսկոպոս Գլակին, որի անունով վանքը կոչուեց Գլակայ վանք: Ապա այնտեղից ս. Գրիգորն ուղևորուեց դէպի Արա-

բատեան երկիրը. Ճանապարհին բազմաթիւ կռատուններ կործանեց և հեթանոսներից շատերին քարոզելով քրիստոնեայ դարձրեց:

11.

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԸ ՄԿՐՏՈՒՄ Է ՏՐԴԱՏԻՆ ԵՒ ՆՐԱ ԸՆՏԱՆԵԱՑ.—Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Գրիգորը իւր ուղեկիցներով երբ հասաւ Բագրևանդ գաւառի Բագուան քաղաքը, Տրդատը իւր գերդաստանի և բոլոր պալատականների հետ նրան մեծ պատուով ընդունեց: Ս. Գրիգորը այդտեղ ևս մի ամսուան ընթացքում ուսուցանելով քրիստոնէութիւնը, պատուիրում է, որ մկրտութիւնն ընդունելուց առաջ բոլորն էլ հինգ օր ծոմ ու պահք պահեն: Այս շաբաթական պահքը մեր եկեղեցին անուանել է «Առաջաւորաց» պահք և որովհետև շաբաթ օրը կատարվում է ս. Սարգիս զօրավարի տօնին, ահա այդ է պատճառը որ ժողովուրդն անուանում է «ս. Սարգսի պաս»: Հնգօրեայ պահեցողութիւնից յետոյ ս. Գրիգորը Եփրատ գետի մէջ մկրտում է Տրդատին,

նրա ընտանեաց և բոլոր ժողովրդին՝ ընդամենը 400,000 հոգի. մկրտութեան ժամանակ Տրդատին անուանեց Յովհաննէս:

Ապա գալով Վաղարշապատ քաղաքը, ս. Գրիգորը 303 թ. ս. Էջմիածնի հոյակապ շինութեան հիմքն է դնում այնտեղ, ուր յայտնի տեսիլքն էր տեսել և՝ նախքան ձեռնադրուելու գնալը, պարսպով պատել:

Ս. Էջմիածինը իբրև կենդրոն հայութեան, նշանաւոր է հայերիս համար նախ՝ որ այնտեղ է գտվում Հայոց Հայրապետութեան աթոռը, երկրորդ՝ որ այնտեղ է օրհնվում ս. մեռոնը, այնտեղ են ս. օծումն ընդունում մեր հայրապետները և ձեռնադրվում եպիսկոպոսները:

Ս. Գրիգորը Էջմիածնի շինութիւնից յետոյ Տրդատի հետ միասին շրջում է Հայաստանի բոլոր քաղաքներն ու գիւղերը, քարոզում է, մկրտում է հաւատացեալներին և նրանց վրայ նշանակում է հովիներ, ձեռնադրում եպիսկոպոսներ և քահանաներ, քանդում է շատ կռատուններ և նրանց տեղ հիմնում քրիստոնէական եկեղեցիներ. բաց է անում դպրոցներ, ժողովում է մանուկներ

և սովորեցնում է յունարէն և ասորերէն, որովհետև այդ ժամանակ դեռ հայերէն գրագիտութիւն չկար. և այսպէս Հայաստանը լուսաւորելով քրիստոնէական հաւատի լուսով, կոչուեց երկրորդ լուսաւորիչ Հայաստանի:

Վրաց ազգի քրիստոնէութիւն ընդունելը: Ս. Նունէ կոյսը, որ Հռիփսիմէի ընկերուհիներից էր, գնալով Վրաստանի Մցխէթ քաղաքը, հրաշագործութեամբ բժշկում է թագուհուն ծանր հիւանդութիւնից, ապա նրանց Միհրան իշխանին և շատերին դարձնում է քրիստոնեայ: Ահա այս ժամանակ ս. Նունէ կոյսը ս. Գրիգոր Լուսաւորչից և Կոստանդիանոս կայսրից խնդրում է հոգևոր հովիւներ, որ նրանց մկրտեն և կատարեն նրանց հոգևոր պէտքերը. այսպիսով ս. Նունէ կոյսը համարվում է Վրաստանի առաքելուհի և լուսաւորիչ:

12.

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՌԱՆՁՆԱԿԵԱՑ ԿԵԱՆՔԸ.—ԱՐԻՈՍԻ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՄԱՀԸ

Ս. Լուսաւորիչը՝ Տրդատի օգնութեամբ լուսաւորելով Հայոց աշխարհը քրիստոնէական հաւատի լուսով և կարգաւորելով մեր եկեղեցական Աստուածպաշտութեան կարգերը, սահմանելով Տէրունական և Աստուածածնայ տօնները, ինչպէս նաև ս. Հռիփսիմեանց և Գայիանեանց յիշատակի օրերը,—իւր ծերութեան օրերում երբեմն-երբեմն առանձնանում էր անապատները և այնտեղ միայնակեցութեան մէջ աւելի կազդուրելով իրան աղօթքով, դարձեալ այցելում էր իւր հօտին՝ հաստատելու քրիստոնէական հաւատի մէջ: Մի անգամ երբ գնաց Դարանաղեաց գաւառի Սեպուհ լեառը, ուր մի քարայրի մէջ ճգնում էր ս. Հռիփսիմէի ընկերուհիներից մի կոյս Մանիա անունով, սուրբ կոյսի խնդրանօք մնաց այնտեղ. բայց երեք օրից յետոյ կոյսը վախճանուեց, ս. Գրիգորը թաղեց նրան և ինքն սկսեց ճգնուել նրա քարայրի մէջ: Հաւատացեալ ժողովուրդը, նրանց հետ և ոմանք իշխաններից լսելով,

որ ս. Լուսաւորիչը ունի երկու որդի, կամեցան նրանցից մէկին ընտրել իւր հօրը փոխանորդ։ Դեսպաններ ուղարկեցին Կեսարիա, որոնք գնացին տեսան, որ մեծ որդին՝ Վլթանէսը ամուսնացած է. իսկ փոքրը՝ Արիստակէսը կրօնաւոր է, որին և բերին Վաղարշապատ և խնդրեցին Լուսաւորչին, որ նրան ձեռնադրէ եպիսկոպոս։ Ս. Գրիգորը կատարելով ժողովրդի ցանկութիւնը, 318 թ. Արիստակէսին ձեռնադրեց եպիսկոպոս և կարգեց իրան օգնական և փոխանորդ։

Այս ժամանակներում, 325 թ., Հռովմի կայսրութեան մէջ առաջ եկաւ մի մոլորութիւն, որի հեղինակն էր Աղէքսանդրացի յոյն երէց Արիոսը, որ միանգամայն ուրանալով Քրիստոսի Աստուածութիւնը, Նրան հաւասար չէր ընդունում Հօր Աստուծոյ հետ։ Այս կրօնական մեծ չարիքի առաջն առնելու համար մեծն Կոստանդիանոսի հրամանով կազմուեց Նիկիա քաղաքում առաջին տիեզերական ժողովը 325 թ., մասնակցութեամբ 318 հայրապետների (քրիստոնէական եկեղեցու ներկայացուցիչների)։ Սոյն ժողովին մեր եկեղեցու կողմից իբրև ներկայացուցիչ մասնակցում էր Արիստակէս հայրապետը՝ սուրբ Լուսաւորչի փոքր որդին։ Այդ ժողովում կազմեցին «Հաւատոյ հանգանակը» և ուրիշ կանոններ։ Արիստակէսը ժողովի վճիռը բոլոր կանոններով բերաւ Հայաստան։ Ս. Գրիգոր Լուսաւորիչն ընդունեց դրանց և իբրև հաստատութիւն, իւր կողմից աւելացրեց հետևեալ խօսքերը՝ «Իսկ մեք փառաւորեսցուք»...։

Ս. Գրիգորը 30 տարի հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ 331 թուին վախճանուեց իւր ճգնարանում. հովիւները գտան նրա մարմինը և թաղեցին այնտեղ։ Ապա յիսուն տարուց յետոյ Գառնիկ անունով մի ճգնաւոր Աստուածային յայտնութիւնով գտնելով ս. Լուսաւորչի գերեզմանը, ս. մարմինը տարաւ ամփոփեց Թորդանում, ուր թաղուած էին նրա որդիքն ու թոռները։

Հայոց երախտապարտ ս. եկեղեցին սահմանել է տարին երեք անգամ տօնել ս. Լուսաւորչի յիշատակը. այն է՝ նրա չարչարանքի և վիրապ մտնելու յիշատակը Մեծի

որ ս. Լուսաւորիչը ունի երկու որդի, կամեցան նրանցից մէկին ընտրել իւր հօրը փոխանորդ։ Դեսպաններ ուղարկեցին Կեսարիա, որոնք գնացին տեսան, որ մեծ որդին՝ Վրթանէսը ամուսնացած է. իսկ փոքրը՝ Արիստակէսը կրօնաւոր է, որին և բերին Վաղարշապատ և խնդրեցին Լուսաւորչին, որ նրան ձեռնադրէ եպիսկոպոս։ Ս. Գրիգորը կատարելով ժողովրդի ցանկութիւնը, 318 թ. Արիստակէսին ձեռնադրեց եպիսկոպոս և կարգեց իրան օգնական և փոխանորդ։

Այս ժամանակներում, 325 թ., Հռովմի կայսրութեան մէջ առաջ եկաւ մի մոլորութիւն, որի հեղինակն էր Աղէքսանդրացի յոյն երէց Արիոսը, որ միանգամայն ուրանալով Քրիստոսի Աստուածութիւնը, Նրան հաւասար չէր ընդունում Հօր Աստուծոյ հետ։ Այս կրօնական մեծ չարիքի առաջն առնելու համար մեծն Կոստանդիանոսի հրամանով կազմուեց Նիկիա քաղաքում առաջին տիեզերական ժողովը 325 թ., մասնակցութեամբ 318 հայրապետների (քրիստոնէական եկեղեցու ներկայացուցիչների)։ Սոյն ժողովին մեր եկեղեցու կողմից իբրև ներկայացուցիչ մասնակցում էր Արիստակէս հայրապետը՝ սուրբ Լուսաւորչի փոքր որդին։ Այդ ժողովում կազմեցին «Հաւատոյ հանգանակը» և ուրիշ կանոններ։ Արիստակէսը ժողովի վճիռը բոլոր կանոններով բերաւ Հայաստան։ Ս. Գրիգոր Լուսաւորիչն ընդունեց դրանց և իբրև հաստատութիւն, իւր կողմից աւելացրեց հետևեալ խօսքերը՝ «Իսկ մեք փառաւորեսցուք»...։

Ս. Գրիգորը 30 տարի հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ 331 թուին վախճանուեց իւր ճգնարանում. հովիւները գտան նրա մարմինը և թաղեցին այնտեղ։ Ապա յիսուն տարուց յետոյ Գառնիկ անունով մի ճգնաւոր Աստուածային յայտնութիւնով գտնելով ս. Լուսաւորչի գերեզմանը, ս. մարմինը տարաւ ամփոփեց Թորդանում, ուր թաղուած էին նրա որդիքն ու թոռները։

Հայոց երախտապարտ ս. եկեղեցին սահմանել է տարին երեք անգամ տօնել ս. Լուսաւորչի յիշատակը. այն է՝ նրա չարչարանքի և վիրապ մտնելու յիշատակը Մեծի

պահոց մէջ հինգերորդ շաբաթ օրը. վիրապից դուրս գալու յիշատակը Հոգեգալստից երկու շաբաթ յետոյ՝ Հռիփսիմեանց տօների շաբաթ օրը. իսկ մարմինը գտնելու յիշատակը երկրորդ տօնից երկու շաբաթ յետոյ՝ յունիս ամսի մէջ։

13.

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԳԻՒՏԸ ՀԵՂԻՆԷ ԹԱԳՈՒՀՈՒ ԲԱՐԵՊԱՇՏ ՋԱՆՔՈՎ.

Յիսուս Քրիստոսի խաչելութիւնից յետոյ, Նրա խաչը երկու աւազակների խաչերի հետ մնացին ընկած Գողգոթա սարի վրայ. հաւատացեալները գնում էին և Յիսուսի խաչին երկրպագութիւն տալիս։ Հրէաները և հեթանոսները նախանձելով այդ բանին, Գողգոթա սարի վրայ մի հոր փորեցին, խաչերը գցեցին մէջը և ծածկելով հող ու քարով և անհետացրին, իսկ վերջին ժամանակները հեթանոս Հռովմայեցիք մի կռքատուն շինեցին Յիսուսի գերեզմանի վրայ և այդպիսով քրիստոնեաներին զրկեցին Յիսուսի խաչին և Նրա գերեզմանին երկրպագելու մխիթարութիւնից։

Բայց երբ Կոստանդիանոս կայսրն ընդունեց քրիստոնէութիւնը, Նրա բարեպաշտ մայր Հեղինէ թագուհին գնաց Երուսաղէմ և այնտեղ տեսնելով սուրբ վայրերը տակնուվրայ եղած, որոշեց ամենից առաջ գտնել Յիսուսի ս. խաչը։ Այս մասին շատերին հարցուփորձ անելուց յետոյ երբ մի հրեայ ծերունուց տեղեկացաւ, թէ Յիսուսի խաչը թաղուած է Գողգոթայի վրայ, քանդել տուաւ ցոյց տուած տեղը, ուր գտնուեցին Յիսուսի և երկու աւազակների խաչերը։ Ստուգելու համար, թէ որն է Նրանցից Յիսուսի իսկական խաչը, մօտեցրին Նրանց մի մերձիմահ հիւանդ. խաչերից մէկը հիւանդին կենդանութիւն շնորհեց. այդ կերպով ստուգուեց, որ այդ էր Յիսուսի խաչը։ Հեղինէ թագուհին խաչի համար շինել տուաւ մի արծաթեայ պահարան թանկագին ակներով զարդարած և Գողգոթա սարի վրայ կառուցանելով մի եկեղեցի՝ սուրբ Յարութեան անունով, դրաւ այնտեղ։ Նոյնպէս շինել տուաւ ուրիշ երկու եկեղեցի ևս. մինը Բեթղեհէմ՝ Յիսուսի ծննդեան տեղը, միւսը Ձիթենեաց սարի վրայ՝ Յիսուսի համբարձ-

ման յիշատակին և ապա վերադարձաւ իւր որդու մօտ։

14.

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ, ՎՐԹԱՆԷՍ, ՅՈՒՍԻԿ ԵՒ ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Սուրբ Գրիգոր Լուսաւորչին յաջորդեց 332 թ. իւր փոքր որդի Արիստակէսը, որ նրա նման ամենայն սրբութեամբ կատարում էր Աղգի և Եկեղեցու պայծառութեան գործերը, շինեց վանքեր և եկեղեցիներ։ Ս. Արիստակէսը միշտ անուղղայ և վատաբարոյ նախարարներին յանդիմանում էր և աշխատում էր ուղղել նրանց անկարգ կեանքը։ Այսպիսի մի հանգամանքի պատճառով Զորրորդ Հայոց Սրբեղայոս իշխանը 339 թ. սպանեց նրան։ Աշակերտները նրա մարմինը տարան և թաղեցին Ծոփաց գաւառի Թիլն աւանում։ Ս. Արիստակէսը իւր հօրից յետոյ եօթն տարի հայրապետական գահը կառավարեց։

Ս. Արիստակէսին յաջորդեց իւր մեծ եղբայր ս. Վրթանէսը 339 թ.։ Սա ևս

իւր հօր և եղբօր շաւղով գնալով, մեծ եռանդով հոգս էր տանում՝ եկեղեցու պայծառութեան համար։ Ս. Վրթանէսը եկեղեցու բարեկարգութեան հրահանգ խնդրեց Երուսաղէմի Մակարիոս պատրիարգից և ստացաւ ութ յօդուածով մի կանոնաթուղթ. իսկ Յակոբ Մծբնայ հայրապետից, որ Լուսաւորչի հօրաքրոջ որդին է՝ հաւատոյ վերաբերեալ մի գրուածք, որ կոչվում է «Զգօն», և այդ բոլորի վրայ ինքն ևս աւելացնելով միքանի յաւելուածներ ու յարմարացնելով մեր եկեղեցու պաշտամանց ոգւոյն, ուղարկեց իւր ստորադրեալ բոլոր եպիսկոպոսներին ի գործադրութիւն։

Այս ժամանակներում Տրդատ թագաւորը զզուելով նախարարների մոլի կեանցից, առանձնացաւ Սեպուհ սարը և սկսեց այնտեղ ճգնուել։ Երբ Տրդատը նախարարների թախանձանքը չընդունեց և չվերադարձաւ իւր գահը կառավարելու, 341 թ. մահաթոյնով սպանեցին ու մարմինը թաղեցին Ամուրն-Անիում 85 տարեկան հասակում՝ 56 տարի թագաւորելուց յետոյ։

Ս. Վրթանէս Տրդատի հաւանութեամբ

և Աղուանից ժողովրդի խնդրանօք իւր մեծ որդի Գրիգորին ձեռնադրեց արք-եպիսկոպոս և ուղարկեց Աղուանք, որից սկիզբն առաւ Աղուանից կաթողիկոսութիւնը։

Ս. Վրթանէս հայրապետը 15 տարի վարելով հայրապետական գահը, 355 թ. փոխուեց աշխարհից և թաղուեց Թորդան գիւղում։

Ս. Վրթանէսին յաջորդեց իւր փոքր որդի Յուսիկը, որ ամուսնանալով Տիրան թագաւորի աղջկայ հետ, ունեցաւ երկու որդի՝ Պապ և Աթանագինէ։ Սա իւր ամուսնու համաձայնութեամբ հրաժարուելով աշխարհային կեանքից, աղօթքով ու բարեգործութիւններով էր անցկացնում իւր օրերը։ 356 թ. երբ ընտրուեց կաթողիկոս և զբաղուած էր՝ իւր նախորդների օրինակին հետևելով, եկեղեցու զանազան բարեկարգութիւններով, Յունաց ուրացող Յուլիանոս կայսրը իւր պատկերը տալով Հայոց Տիրան թագաւորին, ցանկացաւ, որ դրուի Հայոց եկեղեցում։ Երբ Տիրանը կամենում էր կատարել կայսեր այդ ցանկութիւնը, ս. Յուսիկը դիմադրեց. խլեց թագաւորի ձեռքից

պատկերը, գցեց գետին և ոտով փշրեց։ Տիրանը իսկոյն հրամայեց այնքան ծեծել, մինչև որ երանելի Հայրապետը աւանդեց հոգին՝ վեց տարի Հայրապետական գահը կառավարելուց յետոյ. նա թաղուեց Թորդանում իւր հօր գերեզմանի մօտ։

Ս. Յուսիկին յաջորդեց ս. Դանիէլ ծերունին 362 թ., որովհետև Յուսիկի որդիքը հայրապետական աստիճանին արժանաւոր անձինք չէին։ Դանիէլը ազգաւ ասորի էր և աշակերտ ս. Գրիգոր Լուսաւորչի և նրանից էր ընդունել քահանայական կոչումն։ Սա շատ կարճ ժամանակ եղաւ կաթողիկոս, որովհետև երբ առաջին անգամ իւր ընտրուելուց յետոյ ներկայացաւ Տիրան թագաւորին և յանդիմանեց նրան Յուլիանոսի պատկերը եկեղեցում դնելու և Յուսիկին սպանելու համար, թագաւորը սրան ևս խեղդամահ արաւ։ Ս. Դանիէլին յաջորդեց Փառներսեհը և երեք տարի վարելով Հայրապետական գահը՝ վախճանուեց։

15.

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ.—ՆՐԱ. ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ.—ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ Ս. ԺՈՂՈՎԸ

Ներսէս առաջին Հայրապետը Յուսիկ կաթողիկոսի թոռն է, այն է ս. Գրիգոր Լուսաւորչի թոռան թոռը: Սրա հայրն էր ս. Յուսիկի որդի Աթանագինէն, իսկ մայրը՝ Բամբիշ՝ Տիրան թագաւորի քոյրը: Իւր ուսումն ստացել էր Կոստանդնուպօլսում և Կեսարիայում և Հայոց արքունիքում ծառայում էր իբրև սենեկապետ և թագաւորի զինակիր: Փառներսեհի մահից յետոյ Հայոց Արշակ թագաւորի, նախարարների և բոլոր ժողովրդի միաձայն հաւանութեամբ Ներսէսն ընտրվում է կաթողիկոս՝ իբրև Լուսաւորչի արժանաւոր ժառանգ: Ընտրութիւնից յետոյ 364 թ. մեծ հանդէսով գնաց Կեսարիա, ուր և օծուեց Կաթողիկոս ամենայն Հայոց:

Ներսէսը Հայրապետական գահը ժառանգելուց յետոյ, ամենից առաջ իւր հայրական ուշադրութիւնը դարձրեց ժողովրդի ներքին կեանքի և նրա բարեկեցութեան վրայ. նա միքանի անգամ եկեղեցական ժո-

ղով գումարեց և հետևեալ կարևոր որոշումներն արաւ: Ամեն գաւառի և նշանաւոր քաղաքների մէջ շինել տուաւ աղքատանոցներ, հիւանդանոցներ, ճանապարհների վրայ իջևաններ և այլ ողնանման ուստուածահաճոյ հաստատութիւններ, որոց թւում կային շատ դպրոցներ, եկեղեցիներ և վանքեր և այս բոլոր հաստատութիւնները ապահովացրեց անշարժ կալուածներով, որ իբրև նուէր ստանում էր ժողովրդից: Ներսէսին այս բոլոր գործերին օգնական և գործակից էր նրա հաւատարիմ սարկաւագը, որի անունն էր Խաղ:

Ներսէսը բնաւորութեամբ լինելով շատ քաղցր, սիրում էր ամենքին միատեսակ. այսօր նա ճաշում էր թագաւորի պալատում, վաղը գտնվում էր աղքատի խրճիթում, իսկ մի ուրիշ անգամ երևում էր հիւանդի անկողնի մօտ՝ մխիթարելու նրան: Սրա համար և ստացել էր «Հաստատակաց Հայր» անունը: Աշխատեց ժողովրդի միջից արմատախիլ անել միքանի անկարգ հեթանոսական սովորութիւններ, այն է՝ մերձաւոր ազգականների միմեանց հետ պսակվելը, որ

յաճախ պատահում էր նախարարների և ազնուականների մէջ, և մեռելների վրայ այլանդակ ձևերով և անյոյս սուգ անելն ու շռայլ կերպով սևեր հագնելը, որ ոչ մի միտք չունի։

Ներսէսը իւր խաղաղասէր բնաւորութիւնով շատ անգամ թագաւորին նախարարների հետ հաշտեցնում էր, երբոր նրանց մէջ մի որևէ վէճ էր պատահում։ Նա մինչև անգամ իւր իմաստուն և համոզիչ խօսքերով ազդում էր օտար թագաւորների և զօրավարների վրայ. օրինակ՝ երբ Յունաց Վաղենտիանոս կայսեր հրամանով Թէոդոս զօրավարը գալիս էր մեծ զօրքով՝ աւերելու Հայաստանը, Ներսէսը գնաց նրա առաջ, հաշտեցրեց Հայոց թագաւորի հետ և ազատեց Հայաստանը այդ վտանգաւոր պատերազմից։ Սակայն Վաղենտիանոսի յաջորդ Վաղէս կայսեր ժամանակ գնալով Կ.-Պոլիս՝ դարձեալ կամեցաւ նոյն միջնորդի դերը կատարել. բայց Վաղէսն առաջարկեց նրան ընդունել Արիոսեան աղանդը և երբ Ներսէսը չընդունեց, աքսորեց նրան մի անմարդաբնակ կղզի, ուր ութ ամիս

մնալով և իւր անձը ենթարկելով ամեն տեսակ նեղութիւնների, ազատուեց միայն Վաղէսի յաջորդ Մեծն Թէոդոսի ժամանակ, և գալով Կոստանդնուպոլիս՝ մասնակցեց երկրորդ տիեզերական ժողովին, իսկ այնտեղից պատուով վերադարձաւ Հայաստան։ Այս ժամանակ Արշակ թագաւորը անձնատուր լինելով Պարսից Շապուհ թագաւորին՝ մեռնում է Անյուշ բերդում։ Ներսէսը Թէոդոսի օգնութեամբ Արշակի որդի Պապին թագաւորեցնում է Հայոց վրայ։

Ներսէսի այս մեծամեծ և օգտաւէտ գործերը տեսնելով հայ ժողովուրդը, թագաւորի և նախարարների համաձայնութեամբ ժողով արաւ և վճռեց, որ ի պատիւ Ներսէսի այսուհետև մեր կաթողիկոսները անուանուեն «Պատրիարք Կաթողիկոս ամենայն Հայոց» և նոքա ըստ հին սովորութեան այլևս չօծուեն Կեսարիայում, այլ ս. Էջմիածնում՝ հայ եպիսկոպոսների ձեռքով։

Ներսէսը՝ նկատելով Պապ թագաւորի վատ և շռայլ կեանքը և նախարարների հետ անհաշտ լինելը, շարունակ խրատում

էր Թագաւորին, որ հեռանայ իւր շուայլ կեանքից և սիրով վարուի նախարարների հետ։ բայց նա փոխանակ ուղղելու իւր մոլի կեանքը, 384 թ. թունաւորում է նրան, որպէսզի ազատուի Հայրապետի իրաւացի և ողջամիտ յանդիմանութիւններից։ Այսպիսի վախճան ունեցաւ այն մեծագործ մարդը, որ երեսուն և չորս տարի վարելով Հայրապետական գահը, իբրև վառ ճրագ լուսաւորում էր Հայաստանը, և որին անաչառ պատմութիւնը վարձատրեց՝ «Մեծ» անունը շնորհելով. իսկ եկեղեցին նրա յիշատակը կատարում է Հոգեգալստեան երրորդ շաբաթի շաբաթ օրը՝ ս. Էջմիածնի տօնից յետոյ։

Մեծն Ներսէսի մահից յետոյ յաջորդեցին Շապուհ Մանազկերտցին, Զաւէն, Ասպուրակէս, վերջինիս յաջորդեց Սահակ Պարթևը՝ Մեծն Ներսէսի որդին։

Մեծն Թէոդորոս Թագաւորը, որ յաջորդեց Վաղէս կայսրին, հակառակ իւր նախորդին, միանգամայն կուսակից էր քրիստոնէական դաւանութեան և իւր գահ

կալութեան օրից հրաման հանեց, որ ազատ են այն բոլոր հոգևորականները, որոնք իւր նախորդի օրով աքսորուած էին. դրանց թւում ազատութիւն շնորհեց և մեր Հայրապետ Մեծն Ներսէսին։

Թէոդորոս Թագաւորի հրամանով կազմուեց երկրորդ տիեզերական ժողովը Կ. Պոլսում 381 թ., որովհետև այս ժամանակներում Կ. Պոլսի Յունաց պատրիարք Մակեդոնը ուրանալով սուրբ Հոգւոյ Աստուածութիւնը, քարոզում էր թէ ս. Հոգին հաւասար չէ Հօր և Որդւոյ հետ, նա օտար է և լոկ պաշտօնեայ նրանց։ Ժողովը՝ ուր ներկայ էին 150 հայրապետներ, դատապարտեց Մակեդոնին, անուանելով նրան հոգեմարտ, և սահմանեց՝ սուրբ Հոգւոյն դաւանել համագոյակից և հաւասար Հօր և Որդւոյն։ Այս ժողովին մեր եկեղեցու կողմից ներկայ էր Մեծն Ներսէս Հայրապետը։

ԺՐՔԱՆ Գ

16.

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ, ՍՐԱ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՏԱՒՈՐ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՕԳՏԻՆ.—Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ. -ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Զորրորդ դարի վերջին տարիներում և հինգերորդ դարի սկզբին Աստուածային նախախնամութիւնը պարգևեց Հայ եկեղեցուն երկու ընտիր Հայրեր, որոնք իրանց անխոնջ աշխատութեամբ իբրև երկու պայծառ ջահեր լուսաւորեցին հայ ժողովրդին և եկեղեցուն, տալով մեզ մեր լեզուի այբուբենը և Աստուածաշունչ պատգամները՝ թարգմանած հայ լեզուով։ Սրանք էին ս. Սահակ Պարթև և ս. Մեսրոպ Մաշտոց։

Թէև ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութիւնով քրիստոնէութիւնը հաստատուեց Հայաստանում և հետզհետև նրա արժանաւոր յաջորդների աշխատանքով յառաջադիմում էր, բայց անցել էր այն օրից գրեթէ հարիւր տարի, որ Հայերի՝ սեպհական գիր չունենալու պատճառով եկեղեցիներում բո-

լոր ժամակարգութիւնը և ծիսակատարութիւնները լինում էին յոյն և ասորի լեզուներով, որից ժողովուրդը ոչ մի խօսք չէր հասկանում։

Այսպիսի մի ժամանակում 390 թ. ազգի և Խոսրով Գ. թագաւորի հաւանութեամբ ընտրվում է կաթողիկոս Մեծն Ներսէսի որդի սուրբ Սահակը։ Սա դեռ իւր աշխարհական ժամանակ Կ. Պոլսում ամուսնանալով ունեցաւ մի դուստր Սահականոյշ անունով, որ տուել էր Համազասպ Մամիկոնեանին ի կնութիւն, որից ծնուեցին Վարդան, Հմայեակ և Համազասպեան Մամիկոնեանները։ Ս. Սահակը իւր ուսումն ստանալով Կեսարիայում և Կ. Պոլսում, լաւ գիտէր յունական լեզուն, հմուտ աստուածաբան էր, քաջ հայկաբան և որ աւելին է՝ օրինակելի վարք ու բարք ունէր, սիրում էր իւր ազգն ու եկեղեցին։ Նախարարներից ոմանք թագաւորի հետ անմիաբան լինելով՝ նրա վրայ չարախօսութիւն արին Պարսից Շապուհ թագաւորի մօտ, որ իբրև թէ առանց նրա հաւանութեան է կարգուել Սահակը կաթողիկոս։ Այս պատճառով Շա-

պուհը բարկացաւ, ս. Սահակին աթոռից հրաժարեցրեց և Խոսրովին էլ փակել տուաւ Անյուշ բանտում։ Շապուհի որդի Արտաշիրը յաջորդելով իւր հօրը, նորից պատուով վերադարձրեց ս. Սահակին իւր Աթոռը։ Այդ ժամանակից սկսեց ս. Սահակը իւր ազգօգուտ գործունէութիւնը. իբրև կաթողիկոս՝ բարեկարգեց եկեղեցիները, շինեց նորանոր վանքեր և եկեղեցիներ, նորոգել տուաւ Հռիփսիմէի տաճարը, որ Շապուհը քանդել էր տուել։

Ս. Սահակի կաթողիկոսութեան ժամանակ յայտնի էր և մի ուրիշ անձնաւորութիւն՝ Մեսրոպ Մաշտոց անունով, որ բոլորովին համամիտ լինելով նրան, մեծ օգնութիւն ցոյց տուաւ կաթողիկոսին։ Ս. Մեսրոպ Տարոն գաւառի Հացեկաց գիւղից էր, Վարդան անունով մի բարեպաշտ մարդու որդի։ սա համարվում է Մեծն Ներսէսի աշակերտ և նրա գրագիրը. գիտէր յոյն, ասորի և պարսից լեզուները և քաջ տեղեակ լինելով այդ լեզուներին, Ներսէսի մահից յետոյ նշանակուեց թագաւորի պալատում քարտուղար։ Սակայն ս. Մեսրոպին աշխար-

հային այս մեծ պաշտօնները չկարողացան գրաւել, նա եօթը տարի միայն արքունիքում իւր պաշտօնը վարելով, գնաց Գողթան գաւառի մի վանք մտաւ: Իսկ երբ իմացաւ ս. Սահակի կամ դիկոսանալը, ինքը եւս ձեռնադրուեց վարդապետ և երբեմն-երբեմն հեռանալով իւր վանքից քարոզում էր ժողովրդին, կարդում էր ս. Գիրքը և ապա թարգմանում, այդ պատճառով թէ ինքն էր մեծ նեղութիւն կրում և թէ ժողովուրդը շատ սակաւ օգուտ տեսնում: իսկ միւս հոգևոր հայրերը, որոնք չգիտէին յոյն և ասորի լեզուները, կարդացածից ոչ իրանք էին բան հասկանում և ոչ ժողովուրդը: Սկսած այսպիսի հանգամանքները ծնեցին ս. Մեսրոպի մէջ այն ցանկութիւնը՝ թէ պէտք է անպատճառ գտնել Հայոց լեզուի նշանագրերը և իւր միտքը իրականացնելու համար գնաց ս. Սահակի մօտ և յայտնեց նրան: Ս. Սահակը, որ ինքը եւս զբաղուած էր այդ մտքով, շատ ուրախացաւ և իսկոյն յայտնեց այդ մտադրութիւնը Վռամշապուհ թագաւորին և եպիսկոպոսների ժողովին, որոնք իսրտէ համակրութիւն ցոյց տալով,

այս առիթով ունեցան խորհրդածութիւններ: Թագաւորը, որ մանակցում էր ժողովին, յայտնեց, թէ ինքը լսել է, որ Հայոց հին նշանագրերը գտնվում են Միջագետքում Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ. ուստի անմիջապէս կարգադրեցին ուղարկել այնտեղ մի ասորի քահանայ Հաբէլ անունով և մի իմաստուն մարդ Վահրիճ անունով, որոնք սովորելով, Միջագետքից բերին յիշեալ նշանագրերը: Ս. Սահակ և ս. Մեսրոպ փորձեր արին և գտան որ այդ նշանագրերն անբաւարար են մեր լեզուի համար, որովհետև մեր լեզուի բոլոր հնչիւնները լրիւ չէին կարողանում արտայայտել: Ս. Մեսրոպ անձամբ գնաց թէ Միջագետք և թէ այլ նշանաւոր մարդկանց մօտ, բայց բոլորն էլ անօգուտ անցան:

Ս. Մեսրոպն այնուհետև իւր յոյսը կըտրելով մարդկանցից, մի ջերմեռանդ աղօթքով դիմում է Աստծուն և խնդրում, որ օգնէ այս գործում, և երբ խորին մտածմունքի մէջ խորասուզուած աղօթում էր, երևաց նրա աչքին մի աներևոյթ մարդու ձեռք, որ գրեց քարի վրայ իւր ցանկացած

տառերը։ Ս. Մեսրոպը՝ տպաւորելով իւր մտքի մէջ, ձեւակերպեց յիշեալ տառերը և իսկոյն վերադարձաւ Վաղարշապատ, որին մեծ պատուով ընդունեցին ուսումնասէր Վռամշապուհ թագաւորը և ս. Սահակ կաթողիկոսը ժողովրդի հետ միասին։ Սրանից յետոյ, երբ փորձը ցոյց տուաւ, թէ արդէն լրիւ են բոլոր հնչիւնները և յարմար մեր լեզուի համար, ամենից առաջ թարգմանեցին Հին-Կտակարանից Սողոմոնի առակաց գրքերը, իսկ Նոր-Կտակարանից Աւետարանը և ապա ամեն տեղ դպրոցներ բաց անելով ժողովեցին աշակերտներ և հայ լեզուի գրագիտութիւնն սկսեցին տարածել։

Փոքր ժամանակից յետոյ ս. Մեսրոպ Վրացոց և Աղուանից մեծամեծների խնդրանաց համաձայն գնաց նրանց երկիրը, նրանց համար ևս գրեր հնարեց և այնտեղից վերադառնալով ս. Սահակի մօտ, տեսաւ որ շարունակվում է ս. Գրքի թարգմանութիւնը գլխաւորապէս ասորերէնից, որովհետև յունարէն բնագիրը պարսիկները ոչնչացրել էին՝ հայերին կռապաշտ դարձնելու չար նպատակով։

Այնուհետև ս. Սահակ և ս. Մեսրոպ, ինչպէս երկու լուսաւոր ջահեր, աստուածգիտութեան լոյսը և հայ լեզուի դպրութեան գործը անձնուէր ջանքով տարածեցին Հայաստան աշխարհում։ Ս. Սահակ ճոխացրեց նաև մեր եկեղեցական ժամակարգութիւնը նորանոր երգերով ու աղօթքներով, իսկ ս. Մեսրոպ կարգաւորեց մեր Ծիսարանը, որ նրա անունով կոչուեց Մաշտոց։ Ապա ժողովելով աշակերտներ՝ սովորեցնում էին և երբոր վերջացնում էին, նրանցից ընդունակներին և յառաջադէմներին ուղարկում էին կատարելագործուելու Աթէնք, Կոստանդնուպոլիս և Աղեքսանդրիա քաղաքները, ուր կային հռչակաւոր դպրոցներ և ծաղկած էր ուսումն ու գիտութիւնը։ Սրանք ունեցան շատ աշակերտներ, որոնցից նշանաւորները համարվում են՝ Յովսէփ կաթողիկոս, Ղևոնդ երէց, Դաւիթ անյաղթ փիլիսոփայ, Մովսէս Խորենացի, Եզնիկ կողբացի, Կորիւն, Ղազար Փարբեցի և այլն, որոնք իրանց ուսումը կատարելագործելուց յետոյ վերադառնալով Հայաստան՝ թէև տեսան վախճանուած ս. Սահակ և ս. Մեսրոպ

ուսուցիչներին, այնուամենայնիւ, չյուսահատուեցին, այլ կատարելով նրանց փափագը՝ վերջացրին ս. Գրքի թարգմանութիւնը:

Թէպէտ ս. Սահակ կաթողիկոսը ամեն ջանք գործ էր դնում եկեղեցու և ազգի բարօրութեան համար, սակայն իւր ծերութեան վերջին օրերում նախարարների ամբաստանութեամբ բանտարկվում է: Բայց բանտից ազատուելուց յետոյ երբ նախարարներն զգալով իրանց սխալը, աղաչում են նորից գահ նստել, երանելի Հայրապետը հրաժարվում է խպառ և փոքր ժամանակից յետոյ վախճանվում Բագրևանդ գաւառի Բլուր գիւղում 438 թ., 51 տարի վարելով Հայրապետական աթոռը: Նրա մարմինը մեծ հանդէսով թաղում են Տարոնի Աշտիշատ գիւղում:

Ս. Սահակի յաջորդը համարվում է ս. Մեսրոպը [1]), որ միայն վեց ամիս վարե-

[1]) Ս. Սահակի կենդանութեան ժամանակ պարսից Վռամ թագաւորը թէև միմեանց յետևից կարգեց երեք անարժան կաթողիկոսներ՝ Սուրմակ երեց, Բրքիշոյ և Շմուէլ ասորիներին, բայց դրանք իրանց անարժան վարքով չուտով անցան գնացին, այդ պատճառով ս. Սահակի իսկական յաջորդ համարվում է ս. Մեսրոպը:

լով Կաթողիկոսական իշխանութիւնը, վախճանուեց: Նրա մարմինը Վահան Ամատունի հազարապետը տարաւ թաղեց իւր սեպհական Օշական գիւղում: Ս. Մեսրոպի գերեզմանի վրայ շինուած է մի հոյակապ եկեղեցի իւր անունով, որ պէտք է լինէր բոլոր Հայերի համար մեծ և նշանաւոր ուխտատեղի, բայց շատ ափսոս որ այդպէս չէ:

Ս. Սահակ և ս. Մեսրոպ համարվում են թարգմանիչներ, որոնց տօնը մեր եկեղեցին կատարում է յուլիս ամսում, իսկ նրանց աշակերտների տօնը՝ որոնցից շատերը արժանացել են կաթողիկոսական, եպիսկոպոսական աստիճանի, կոչվում են թարգմանիչ վարդապետներ՝ կատարվում է հոկտեմբեր ամսում:

17.

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Քրիստոնեայ հաւատացեալները սկզբնեում իրանց հաւատի դաւանութիւնը յայտնում էին հետևեալ երեք խօսքերով. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. բայց երբ հաւատացեալի միջից յայտնուեցան այնպի-

սի անձինք, որոնք աստուածային գաղտնիքը, որ մարդկային մտքին անհասանելի է՝ քննադատեցին և շեղուելով ուղիղ դաւանութիւնից, ընկան մոլորութեան մէջ, այդ ժամանակ քրիստոնեայ եկեղեցու ողջամիտ վարդապետները՝ կամենալով մոլորութիւնների առաջն առնել, կազմեցին տիեզերական ժողովներ: Մեր եկեղեցին ընդունում է միայն երեք այդպիսի տիեզերական ժողով:

Առաջին տիեզերական ժողովը գումարուեց Նիկիա քաղաքում Քրիստոսի 325 թ. 318 հայրապետների մասնակցութեամբ: Այդ ժողովի մէջ դատապարտեցին Աղէքսանդրացի յոյն երէց Արիոսի մոլորութիւնը, որ ուրանալով Քրիստոսի աստուածութիւնը, չէր դաւանում Քրիստոսին Աստուած և Աստուծոյ Որդի, այլ լոկ արարած: Ժողովը կազմեց «Հաւատոյ հանգանակը» 12 յօդուածով և ուրիշ կանոններ, այլ և սահմանեց՝ հաւատալ, որ Յիսուս Քրիստոս՝ է ճշմարիտ Աստուած և Աստուծոյ Որդի, համագոյակից Հօր և ս. Հոգւոյն և աստուածային բոլոր յատկութիւններով հաւասար Նրանց:

Երրորդ տիեզերական ժողովը գումարուեց Կոստանդնուպոլսում Մեծն Թէոդոսոս կայսեր հրամանով 381 թ. 150 հայրապետների մասնակցութեամբ: Այս ժողովը դատապարտեց հոգեմարտ Մակեդոնին, որ Կ. Պոլսի Յունաց պատրիարք էր: Սա ուրանալով Հոգւոյն Սրբոյ աստուածութիւնը, քարոզում էր, թէ ս. Հոգին հաւասար անձն չէ Հօր և Որդւոյ հետ, այլ Նրանց պաշտօնեայ և Նրանց էութիւնից իսպառ օտար: Ժողովը սահմանեց՝ դաւանել ս. Հոգւոյն համագոյակից Հօր և Որդւոյն և աստուածութեամբ հաւասար: Այս ժողովին ներկայ էր և մեր Հայրապետ Մեծն Ներսէս:

Երրորդ տիեզերական ժողովը գումարուեց Ասիայի Եփեսոս քաղաքում 431 թ. 200 հայրապետների մասնակցութեամբ: Այս ժողովը դատապարտեց Կ. Պոլսի յոյն պատրիարք Նեստորին, որ մոլորուելով Աստուած-Որդու ճշմարիտ մարդեղութիւնից, քարոզում էր, թէ այլ է Աստուծուց և այլ է ս. Կոյս Մարիամից ծնուածը: Այդպիսով ս. Կոյսին դաւանում էր ոչ թէ Աստուածածին, այլ մարդածին կամ քրիստոսածին, և այդպէս՝ ամենասուրբ Երրորդութեան երկրորդ

անձին՝ Յիսուս Քրիստոսին երկու բաժանելով Երրորդութիւնը դարձնում էր չորրորդութիւն։ Ժողովը դատապարտելով Նեստորին՝ հեռացրեց նրան պատրիարքական աթոռից, աքսորեց և սահմանեց դաւանել Յիսուս Քրիստոսին՝ մի Որդի Աստուծոյ, իսկ Մարիամ ս. Կոյսին Աստուածածին։ Այս ժողովի վճիռը Հայաստան բերին մեր ս. թարգմանիչները—Սահակի և Մեսրոպի աշակերտները։

Առաջին տիեզերական ժողովի յիշատակը մեր եկեղեցին կատարում է սեպտեմբեր ամսում, վերացման ս. Խաչի տօնի բարիկենդանի շաբաթ օրը. երկրորդ ժողովինը՝ բուն բարիկենդանի շաբաթ օրը, իսկ երրորդինը՝ ս. Աստուածածնի վերափոխման բարիկենդանի շաբաթ օրը։

18.

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՈՑ ԵՒ ՊԱՐՍԻՑ ՄԷՋ.—ԱՏՈՎՄԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ.—ՊԱՐՍԻՑ ՅԱՋԿԵՐՏ ԹԱԳԱՒՈՐԻ ՋԱՆՔԸ ԻՒՐ ՀՊԱՏԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԻՆ ԿՐԱԿԱՊԱՇՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ

Ս. Սահակ և ս. Մեսրոպ թարգմանիչների աշակերտ Յովսէփ կաթողիկոսի ժամանակ Պարսկաստանում թագաւորում էր Յազկերտ Բ., երբ Արշակունեաց թագաւորութիւնն արդէն վերացած լինելով, Հայաստանը քաղաքականապէս ոյժից ընկած էր։ Երկու դրացի ազգեր՝ յոյներն ու պարսիկները ձգտում էին տիրել Հայաստանին, բայց որովհետև այդ միջոցին պարսիկները յոյներին յաղթելով, նաև մեծաքանակ տուգանքի էին ենթարկել նրանց, ուստի և ամենայարմար ժամանակն էին համարում վճռական քայլն անելու՝ մտադրուած նպատակին հասնելու համար. այն է՝ իրանց հպատակ բոլոր ազգերին—հայերին, վրացիներին և աղուաններին դարձնել կրակապաշտ։ Առաջին փորձն սկսեցին Հայերից, այն յոյսով, որ եթէ Հայերը կրակապաշտ դառնան, Վրացիք և Աղուանք կը դառնան ու դառնան։

Յազկերտ այս գործում հետևում էր իւր խորամանկ հազարապետ Միհրներսեհին, մոգերին և մոգպետներին։

Առաջին փորձը, որ նրանք մտածեցին անելու, այն էր, որ հրաման ուղարկուեն Հայաստան, ինչպէս նաև Վրաստան և Աղուա-

նից աշխարհ, որ այդ հպատակ ազգերի զօրավարներն ու նախարարները իրանց զօրքով գան և օգնեն Հոնաց հետ սկսած պատերազմում: Հայերը թագաւորի հրամանը հնազանդութեամբ կատարեցին: Որպէսզի Հայերը ոչ մի կասկած չտանեն, Յազկերտը Վասակ Սիւնեաց նախարարին տալիս է երկրի կուսակալութիւնը, իսկ Վարդան Մամիկոնեանին նշանակում է Հայոց զօրավար: Երկու տարի պատերազմը Հոնաց դէմ շարունակվում է, Պարսիկները չեն կարողանում յաղթել: Յազկերտը հրամայում է հին զօրքերին յետ ուղարկել և նորերին բերել. այսպէս պատերազմը եօթը տարի շարունակուեց: Վերջին տարին, որ Պարսիկները յաղթութիւնը տարան, Յազկերտն ուղղակի առաջարկեց Հայերին թողնել քրիստոնէութիւնը և ընդունել կրակապաշտութիւնը: Պատերազմի մէջ հայ զօրքին առաջնորդում էին Ատոմ Գնունի զօրավարը և Մանաճիհր Ռշտունի նախարարը: Սրանք իրանց զօրքով արհամարհելով թագաւորի խօսքը, շտապեցին փախչել Հայաստան, իսկ Պարսից զօրքերը հասնելով ճանապարհին՝ նա-

հատակեցին բոլորին և այս նահատակութիւնը կոչուեց Ատոմեանց նահատակութիւն՝ Ատոմ զօրավարի անունով, որոց յիշատակը եկեղեցին կատարում է Առաջաւորաց պահքից յետոյ առաջին երկուշաբթի օրը:

Երբ Յազկերտը իւր առաջին փորձով չկարողացաւ նպատակին հասնել, ուղարկեց Հայաստան մի պարսիկ իշխան Դենշապուհ անունով՝ իբր թէ նոր աշխարհագիր անելու: Սա իւր դաժան ընաւորութիւնով մեծամեծ չարիքներ հասցրեց հայ ժողովրդին. եկեղեցին, որ ազատ էր, հարկատու դարձրեց, նախարարներին միմեանց հետ թշնամացրեց և երկրի մէջ ներքին երկպառակութիւն գցեց: Այս բոլոր չարիքը հայ ժողովուրդն ամենայն համբերութիւնով տարաւ, սակայն և ոչ մինը հաւատափոխ չեղաւ:

Երբ այդ փորձը ևս անյաջող անցաւ, Միհրներսեհ հազարապետը թագաւորի հրամանով մի նամակ գրել տուաւ մոգերին և մոգպետներին և ուղարկեց Հայաստան, որի մէջ Պարսից արքունիքն աշխատում էր ցոյց տալ պարսկական կրօնի առաւելութիւնը և

քրիստոնէութեան պակաս կողմերը։ Նամակը վերջանում էր հետևեալ խօսքերով. «Հայերը պարտաւոր են կամ կէտ առ կէտ պատասխանել նամակին, կամ գնալ Պարսկաստան և ներկայանալ Թագաւորին»։ Երբ այս նամակն ստացուեց, ս. Յովսէփ կաթողիկոսը բոլոր եպիսկոպոսների, երէցների և նշանաւոր իշխանների ու նախարարների հետ ժողով արաւ 449 թ. Արտաշատ քաղաքում և ժողովը բոլորի համանութիւնով գրեց Միհրներսեհի թղթի պատասխանը, որի մէջ զօրաւոր փաստերով ապացուցանում էին քրիստոնէական կրօնի ճշմարտութիւնները։ Հայերը իրանց պատասխանը վերջացրին հետևեալ խօսքերով. «Այս հաւատից մեզ. ոչ ոք չէ կարող հեռացնել՝ ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր... քո սուրը և մեր պարանոցը. մենք ամենքս ուրախութիւնով կը մեռնենք, բայց չենք փոխիլ մեր սուրբ հաւատը»։

Այս պատասխանը երբ ստանում է Յազկերտը, հրամայում է հրապարակով կարդալ. լսողները և՛ գովում էին, և՛ զարմանում այնպիսի իմաստուն և համարձակ գրուածքի վրայ. իսկ Յազկերտը աւելի ևս զայրանալով՝ Պարսկաստան է կանչում հայ նշանաւոր նախարարներին և իշխաններին, որոնց ս. Յովսէփ կաթողիկոսը օրհնելով ճանապարհ է գցում։ Զատկի շաբաթ օրը նախարարները հասնում են Պարսից դուռը բայց ոչ սովորական հանդիսաւորութեամբ, այլ բոլորովին անշքօրէն։ Երբ նախարարները ներկայացան Թագաւորին, նա սպառնալից եղանակով առաջարկեց նրանց, որ եթէ հետևեալ օրը արեգակը ծագելիս չեն երկրպագիլ արեգակին և իբրև Աստուած չեն պաշտիլ, ամենածանր պատիժների կ'արժանանան։ Այս ժամանակ Վարդան Մամիկոնեանը միւս նախարարների հետ միասին ամենամեծ վստահութեամբ յայտնեցին Թագաւորին, որ ամենքը պատրաստ են տանել այն բոլոր տանջանքները, ինչ որ կարող է Թագաւորի մտքովն անցել և ամենայն սիրով մեռնել, քան ուրանալ իրանց սուրբ հաւատը և ուրիշ կրօն դաւանել։

Թագաւորը երբ այս խօսքերը լսեց, աւելի ևս բորբոքուելով՝ հրամայեց բանտարկել բոլոր նախարարներին և խիստ հսկել,

որ ոչ մի մարդ իրաւունք չունենայ նրանց երեսը տեսնել։ Բանտարկեալների մօտ երթևեկում էր միայն թագաւորի մտերիմներից մինը, Խուժիկ անունով, որ ծածուկ քրիստոնեայ էր. սա խորհուրդ տուաւ նախարարներին, որ առերեսս թագաւորի հրամանը կատարեն, գնան հայրենիք և այնտեղ միացած ոյժով պաշտպանեն երկիրը։ Նախարարները հետևեցին Խուժիկի խորհրդին։ Յազկերտը լսելուն պէս, շատ ուրախացաւ և մեծ տօն կատարեց, նախարարներին բանտից ազատեց և բոլորին զանազան պարգևներով վարձատրելով՝ ուղարկեց Հայաստան, նրանց հետ և 700 մոգ, որ Հայաստանում մոգութեան կրօնը տարածեն։

Նախարարների ուրացութեան լուրը նրանցից շուտ հասաւ հայրենիք և դեռ նախարարներն ու մոգերի խումբը տեղ չէին հասած, որ հայ ժողովուրդը՝ մեծ թէ փոքր, մարդ թէ կին բոլոր հոգևորականների հետ մի սիրա և մի հոգի դարձած՝ սուրը Խաչի և Աւետարանի վրայ երդուեցին, որ ամենքը հաստատ մնալով իրանց հաւատին, զէնք

վերցնեն ուրացողների դէմ և ոչ ոք չխնայէ նոյնիսկ իւր ամենամօտ սիրելիին, եթէ նա ուրացած լինի իւր հաւատը։ Նախարարները հասան Ծաղկոտն գաւառի Անգղ գիւղաքաղաքը։ 25 օր այդտեղ հանգստանալուց յետոյ, մոգպետը կամեցաւ առաջին փորձն անել. նա իւր մոգերով յարձակուեց եկեղեցու վրայ, որ քանդի և նրա տեղը կրակատուն շինէ։ Այդ օրը եկեղեցում պատարագիչ էր Ղևոնդ երէցը, որ բոլոր ժողովրդի և հոգևորականների հետ իսկոյն դուրս եկաւ և յարձակուելով մոգերի վրայ, ծեծելով վռնդեց այնտեղից։ Մոգպետը զարմանալով Հայոց ժողովրդի հաւատի հաստատութեան վրայ, կամեցաւ գրել Յազկերտին և խորհուրդ տալ, որ հրաժարուի Հայերին կրակապաշտ դարձնելու մտքից, որովհետև այդ բանը համարում է անիրագործելի. սակայն Վասակը, որ սրտանց ուրացել էր քրիստոնէութիւնը, համոզում է մոգպետին, որ ինքը Հայերի մէջ շատ հեշտութեամբ կարող է տարածել կրակապաշտութիւնը։ Սա իւր նենգամիտ խորհրդով և շողոքորթութիւնով կարողանում է խաբել միամիտներին,

ընդունել է տալի կրակապաշտութիւնը և շինվում են միքանի կրակատուններ։ Ուխտապահ նախարարները Վարդանի հետ իմանալով այս բոլորը, կալանաւորում են ուրացող Վասակին, բայց նա սուրբ Խաչի և Աւետարանի վրայ երդուելով՝ ազատվում է բանտից։

Այնուհետև Հայերը յարձակուելով մոգերի և պարսկական զօրքերի վրայ, մեծ հարուած են տալիս նրանց, գրաւած տեղերը յետ են խլում և շինած կրակատունները քանդում։ Երբ այսպէս՝ Հայերը ազատելով երկիրը մոգական կրակապաշտութիւնից, տօնում էին իրանց յաղթութիւնը, յանկարծ լուր են առնում, թէ Պարսից զօրքը մտել է Աղուանք և ստիպում է ընդունել մոգութիւնը։ Վասակը դիտմամբ Հայոց զօրքը բաժին-բաժին է անում՝ նրանց ոյժը թուլացնելու համար. նա Վարդանին իր գնդով ուղարկում է Աղուանից աշխարհ, ինքը մեծ բանակով մնում է Արարատեան գաւառում, Ներշապուհ Արծրունի իշխանին յանձնում է Պարսից սահմանագլուխը պաշտպանել և իր այս կարգադրութիւնը

յայտնում է պարսիկներին։ Վարդանը Աղուանից աշխարհում կոտորում է մոգերին և քանդում կրակատունները, բայց յանկարծ լուր է ստանում, թէ Վասակը ժրխտելով իւր երդումը, այրում է Հայոց գիւղերը և կոտորում բնակիչներին, ուստի և անմիջապէս շտապում է իւր զօրքով Հայաստանն ազատելու։ Վասակը լսելով այդ մասին, փախչում է Սիւնիք՝ իւր գաւառը. և որովհետև ձմեռը վրայ է հասնում, ուստի և զօրքերը հանգստանում են և երկրի մէջ խաղաղութիւն է տիրում։

Հայերը զայրանալով Վասակի անհաւատարմութեան վրայ, խորհուրդ արին և մի պատգամաւոր ուղարկեցին Յազկերտի մօտ ասելու՝ որ պատրաստ են հնազանդել թագաւորին, եթէ ազատութիւն տրուի քրիստոնէութիւնը պաշտել, յայտնելով նաև որ այս բոլոր անկարգութիւնների և մեծամեծ փնաների բուն պատճառը Վասակն է։ Այս որ լսեց թագաւորը, փոքր ինչ մեղմացաւ և ազատութեան թուղթ տուաւ, որ քրիստոնէութիւնը ամենայն տեղ պաշտուի համարձակ։ Սակայն այդ ազատութիւնը

ժամանակաւոր էր և միայն Հայերին միամտացնելու համար։ Յազկերտը շուտով փոխեց իւր միտքը և հրամայեց Միհրներսեհ հազարապետին մեծ զօրք ժողովել և փղերի երամակներով յարձակուել Հայերի վրայ և զէնքի ոյժով ընդունել տալ մոգական կրօնը։ Այս դառն ժամանակին թէև Հայերը պատգամաւոր ուղարկեցին Յունաց կայսրի մօտ օգնութիւն խնդրելով, բայց մերժումն ստացան և պարտաւորուեցին իրանց սեպհական ոյժով պաշտպանել քրիստոնէութիւնը։

19.

ԱՒԱՐԱՅՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՒ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Զատկական տօնին Միհրներսեհը հասաւ Փայտակարան նահանգը. Հայոց ուխտապահ նախարարներն էլ, մանաւանդ Վարդան Մամիկոնեանը, տեսնելով Վասակի չարութիւններն ու Պարսից ահագին պատրաստութիւնը, պատերազմի հրաւէր կարդացին բոլոր Հայ ժողովրդին։ Հաւաքուեց 66,000 կամաւոր զօրք և բանակ կազմելով՝

զօրախումբը գնաց դէպի Աւարայրի դաշտը և կանգ առաւ Տղմուտ գետի ափին. նոյն տեղը եկել էին և ս. Յովսէփ կաթողիկոսը, Ղևոնդ երէցը, Սահակ եպիսկոպոսը և քահանաներ՝ մասնակցելու պատերազմին։ Իսկ Պարսից ահագին բանակը վաղուց անցնելով Հեր և Զարևանդ գաւառներից, բանակ էր դրել նոյն Տղմուտ գետի միւս կողմում։ Պատերազմից առաջ՝ Վարդան Մամիկոնեանը իւր ճառով և Ղևոնդ երէցը իւր քարոզով ոգեւորում են իրանց սակաւաթիւ զօրքերին և ասում. «Զվախենանք թշնամու բազմութիւնից, այլ քաջութեամբ պատերազմենք, որ կամ յաղթենք և կամ քաջութեամբ ընդունենք պատերազմի սուրը մահը, միայն թէ մեր տղամարդութեան հետ չխառնենք վատութիւն։ Ս. Ղևոնդը և միւս քահանաներն այդ օրը պատարագ մատուցանելով, խոստովանում և հաղորդում են զօրքերին։ Միւս առաւօտը՝ որ Հոգեգալստեան տօնի եօթներորդ օրն էր 451 թ. յունիս ամսին, սկսվում է արիւնահեղ պատերազմը, որ շարունակվում է մինչև երեկոյ։ Երկու կողմն էլ համարում էր իրան թէ յաղթած և

թէ յաղթուած։ Հայոց սպարապետ քաջ Վարդանը, որ առաւօտից մինչև երեկոյ թշնամու զօրքից շատերին էր սպանել, ինքը ևս երեկոյեան դէմ ընկաւ պատերազմում և նահատակուեց։ Վարդանի հետ նահատակուեցին ութ նախարարներ և զինուորներ, որոց թիւը հասնում է 1036 հոգու. պարսիկների կողմից սպանուեցին 3544 մարդ։ Այսպէս քրիստոնէական հաւատի և ազգային եկեղեցու ազատութեան համար զոհեցին իրանց անձը այն սուրբ նահատակները, որոնց յիշատակը մեր եկեղեցին կատարում է «Վարդանանց զօրավարաց և 1036 վկայից» անունով բուն բարիկենդանի վերջին շաբաթի հինգշաբթի օրը։

Պատերազմից յետոյ պարսիկներն աւերեցին Վաղարշապատն ու ս. Էջմիածինը, որ այն ժամանակ կաթուղիկէ էր կոչվում, ուստի և հարկ եղաւ Հայրապետական Աթոռը տեղափոխել Դուին, որ Վաղարշապատից հեռու չէր։

Պատերազմը վերջանալուց յետոյ Պարսից զօրավարը գնալով Թագաւորի մօտ, համոզեց նրան, որ անհնարին է հայերին

կրակապաշտ դարձնելը. 'ի զուր երկիրն աւերվում է և արքունիքը մեծամեծ վնասների ենթարկվում, և բոլոր վնասների պատճառը համարելով ուշացող Վասակին, խիստ բողոքեց նրա դէմ։ Յազկերտը հրամայեց Վասակին կանչել, զրկեց նրան բոլոր իրաւունքներից ու պատուից և հրամայեց բանտարկել, ուր նա ամենադառն տանջանքներից յետոյ որդնալից եղաւ և մեռաւ։

Սրանից յետոյ Յազկերտը հրաման հանեց և առ երեսս ազատութիւն տուաւ Հայերին իրանց կրօնը պաշտելու, նրանց վրայ նշանակելով մի խորամանկ և բռնակալ կառավարիչ Ատրորմիզդ անունով, որ իւր խաբեբայ և խարդախ ընաւորութեամբ կաբողացաւ խաբել նշանաւոր հայ հոգևորականներին ու նախարարներին և ուղարկել Պարսկաստան՝ ներկայանալու Թագաւորին։ Միհրներսեհը թէպէտ Թագաւորի հրամանով առ երեսս ընդունեց նրանց պատուով, բայց յետոյ նրանց բոլորին բանտարկել տուաւ և ապա հրամայեց տանել նրանց Նիւշապուհ քաղաքը և յանձնել մոգպետի հսկողութեան, որ նրանց դարձնի կրակապաշտ.

սակայն մոգպետը տեսնելով նրանց առաքինի կեանքը, ինքն ընդունեց քրիստոնէութիւն։ Յազկերտը երբ իմացաւ՝ դառնացած սրտով հրամայեց հանել բանտից հայ հոգևորականներին և բոլորին էլ կոտորել։ Այս նահատակութիւնը Ղևոնդ երէցի անունով կոչուեց «Ղևոնդեանց նահատակութիւն», որոնց յիշատակը մեր եկեղեցին կատարում է բուն բարիկենդանի երեքշաբթի օրը։ Ապա ազատուեցին բանտարկուած նախարարները չորսամեայ բանտարկութիւնից յետոյ։

20.

ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՇԱՆԱՒՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ V-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Հինգերորդ դարում մեր եկեղեցին ունեցել է տասներկու կաթողիկոս, որոց մէջ նշանաւոր համարվում են հինգը՝ իրանց ազգասիրական գործունէութեամբ և սրբակեաց կեանքով. այն է՝ ս. Սահակ, ս. Մեսրոպ, ս. Յովսէփ, Գիւտ և Յովհան Մանդակունի։

Ս. Սահակ Պարթևի և ս. Մեսրոպ Մաշտոցի համառօտ նկարագիրն արդէն արած լինելով գրքոյկիս 16-րդ գլխում, դառնանք միւս կաթողիկոսներին։

Ս. Յովսէփ կաթողիկոսը՝ Վայոց Ձորեցի (Դարալագեազ), ս. թարգմանիչների նշանաւոր աշակերտներից մինն է և ս. Մեսրոպի մահից յետոյ համարվում է նրա արժանաւոր յաջորդը։ Սա Շահապիվան քաղաքում 447 թ. ժողովք արաւ և վերջ դրաւ եկեղեցու մէջ մտած զանազան անկարգութիւններին և սահմանեց կանոններ եկեղեցու բարեկարգութիւնների համար։ Վարդանանց պատերազմի ժամանակ իբրև կաթողիկոս նոյնպէս ժողովք արաւ Արտաշատ քաղաքում, ուր գրուեց Յազկերտի հրովարտակի պատասխանը, բայց պատերազմից յետոյ կալանաւորուեց պարսիկներից ս. Ղևոնդեանց հետ, բանտարկուեց Պարսկաստանում և նահատակուեց։

Գիւտ կաթողիկոսը՝ որ նոյնպէս թարգմանիչների աշակերտներից է, քաջ գիտեր յունական լեզուն, վարում էր բարեպաշտ և սրբակրօն կեանք, կաթողիկոս ընտրուեց

465 թ. եօթանասնամեայ հասակի մէջ։ Սա բարեպաշտ վարք ունէր, եկեղեցական գիտութիւնների մէջ ունեցած հմտութեամբ ճոխացրեց և կարգաւորեց մեր եկեղեցու ժամակարգութիւնը ընտիր աղօթքներով և շարականներով։ Սրա ժամանակ պարսիկները դարձեալ շարունակում էին ստիպել հայերին ուրանալ իրանց հաւատը, բայց կաթողիկոսի կողմից հանդիպում էին մեծ դիմադրութեան։ Սրա ջանքերով շատ կրակատուններ խորտակուեցին. ուրացեալ նախարարներին և այլոց խիստ լեզուով հանդիմանում էր թէ խօսքով և թէ գրով, ուստի և նրանց կողմից ամբաստանուեց և աքսորուեց Պարսկաստան՝ զրկուելով Հայրապետական իշխանութիւնից և վախճանուեց 475 թ.՝ տասը տարի վարելով Հայրապետական իշխանութիւնը։

Յովհան Մանդակունին՝ որ նոյնպէս համարվում է ս. Թարգմանիչների աշակերտ և ընկերակից Գիւտին, կաթողիկոս ընտրուեց 480 թ., եօթանասունևհինգ ամեայ հասակի մէջ։ Սա իւր սրբութեամբ և հմտութեամբ մեծ հռչակ ստացաւ։ Սրա ջանքով

պակասեց հաւատուրացների թիւը և աւելացաւ ազգային եկեղեցուն հաւատարիմ նախարարների և իշխանների թիւը։ Իւր իմաստութեամբ բարեկարգեց Աթոռը և իւր հմտութեամբ ու վայելուչ կանոններով զարդարեց մեր եկեղեցու Աստուածպաշտութեան կարգերը նորանոր աղօթքներով, բարոզներով և շարականներով։ Սա իւր իմաստալից յորդորներով քաջալերեց Վահան Մամիկոնեանին և Հայոց զօրքին, որոնք կարողացան քաջութեամբ յաղթել Պարսից արքային և յաղթութիւնից յետոյ՝ եկեղեցու մէջ մի փառաւոր ատենաբանութեամբ օրհնեց բոլորին և վախճանուեց վեցամեայ կաթողիկոսութիւնից յետոյ։

21.

ՔՐԻՍՏՈՍԻ ԴԱՍՏԱՌԱԿԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵԴԵՍԻԱ ՔԱՂԱՔԻՑ Կ. ՊՕԼԻՍ

Քրիստոսի դաստառակը, որ Աբգար Հայոց թագաւորն ստացել էր, Եդեսիա քաղաքի պահպանութեան համար դրուած էր քաղաքի պարսպի դռան վրայ։ Աբգարի մահից յետոյ, երբ նրա որդի Անանէն ուրանալով

քրիստոնէական հաւատը, նորից իրաւունք տուաւ բանալ կռատունները և հալածում էր քրիստոնեաներին, Աղդէ հայրապետը թագցրեց դաստառակը, որի մէջ և մնաց անյայտ մինչև 539 թիւը։ Այդ ժամանակ Պարսից Խոսրով թագաւորը յարձակուեց Յունաստանի սահմանի վրայ և լսելով Եդեսիայի անառիկ լինելը, իւր զօրքով գնաց և պաշարեց քաղաքը։ Բնակիչները սաստիկ վախեցած, իրանց ջերմեռանդ աղօթքով դիմեցին Աստծուն, որ ազատէ իրանց այդ աղէտից։ Նոյն գիշերը քաղաքի եպիսկոպոսին յայտնուեց հրաշքով դաստառակի տեղը և երազի մէջ հրաման ստացաւ՝ հանել տալ պատկերը և նրանով ազատել քաղաքը թշնամու յարձակմունքից։ Եպիսկոպոսը կատարեց, ինչպէս որ յայտնուեց նրան, և այս երկնային հրաշքով Պարսիկները՝ յուսահատուած ու ամօթով վերադարձան։ Փրկչի դաստառակը (անձեռագործ պատկերը) մնաց Եդեսիայում մինչև 944 թ., այն է՝ մինչև նրա Կոստանդնուպոլիս տեղափոխելը։

Փրկչի անձեռագործ պատկերը Եդեսիայից փոխադրուեց Կ. Պոլիս 944 թ. օ-

գոստոսի 16-ին։ Յունաց հայազգի Ռոմանոս կայսրը գրեց Եդեսիայի բնակիչներին ու քաղաքի իշխանին և խնդրեց, որ ուղարկեն Քրիստոսի դաստառակը և Աբգարին ուղարկած նամակը, որի համար խոստացաւ փոխարէնը տալ նրանց թանկագին պարգևներ։ Այս խնդիրը չյարգուեց ոչ իշխանի և ոչ բնակիչների կողմից, ուստի կայսրը մեծ զօրք ուղարկեց և հրամայեց բռնութեամբ խլել նրանցից։ Քաղաքի իշխանը երկիւղից ստիպուած հրամայեց, որ կայսեր ցանկութիւնը կատարուի. ուստի երկու եպիսկոպոս վերցրին դաստառակը և մեծ հանդէսով տարան Կոստանդնուպոլիս։ Երբ լսեցին քաղաքի բնակիչները՝ պատրիարքի հետ միասին տարան բազմեցրին ս. Աստուածածնայ եկեղեցու մէջ և սահմանեցին իւրաքանչիւր տարի տօն կատարել օգոստոսի 16-ին։ Այս անգին գանձը պահած մնում էր Կ. Պոլսում մինչև 1325 թ., երբ կայսրների մէջ ինչ-ինչ խռովութիւն պատահելով, անյայտացաւ այն արկղը, որի մէջ պահուած էր Քրիստոսի ուղարկած նամակը Աբգար թագաւորին, իսկ դաստառակը փո-

խաղրուեց Իտալիա, Գենուա քաղաքը, ուր ամուր պահարանի մէջ դրին և փականքներով փակեցին, որ մինչև այսօր էլ պահպանվում է մեծ զգուշութեամբ։

22.

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ.—ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

Աբրահամ կաթողիկոսի վերջին տարիներում Պարսից Խոսրով թագաւորը, որի անհաշտ թշնամութիւնը դեռ ևս շարունակվում էր Յունաց հետ, 614 թ. մեծ զօրք ժողովեց, գնաց Պաղեստին, առաւ Երուսաղէմ քաղաքը, վերցրեց Յիսուսի խաչը և երեսուն հազար հոգի գերի ու տարաւ Պարսկաստան, նոյնպէս և այնտեղի Զաքարիա պատրիարքին, իսկ խաչափայտը դրեց իւր կռատանը և պահում էր մինչև 629 թ. 'ի նախատինս քրիստոնէից։

Սրանից յետոյ Յունաց Հերակլ կայսրը զօրեղանալով, մեծ զօրք ժողովեց, գնաց և պատերազմեց Խոսրովի հետ, քշեց պարսիկներին իւր սահմանից, Խոսրովն էլ ահից փախաւ։ Հերակլին յաջողուեց յետ ստանալ

Քրիստոսի ս. Խաչափայտը և 629 թ. եկաւ Երուսաղէմ, ուր ինքը իւր ուսին դրած, տարաւ ս. Խաչը և բազմեցրեց նոյն խոտանում, որտեղից պարսիկները տարել էին, և ապա Երուսաղէմի Մակարիոս պատրիարքը մեծ հանդէս կատարելով, տօն-կարգեց սեպտեմբեր ամսի 14-ին, որ կոչուեց «Վերացման ս. Խաչի» տօն։

Սուրբ Հռիփսիմեանց կոյսերը իրանց հալածանաց ժամանակ գալով Հայաստան, բնակուեցին Վարագայ սարում և սուրբն Հռիփսիմէ իւր խաչը թաղեց այնտեղ, որ 653 թ. հրաշքով յայտնուեց Թոդիկ անուանով մի ճգնաւորի։ Թոդիկը աւանդութեամբ լսել էր, որ ս. Հռիփսիմէի կրած խաչը թաղուած է այնտեղ Հռիփսիմէ կոյսի ձեռքով։ մի անգամ նա՝ իւր Յովել աշակերտի հետ աղօթելու ժամանակ լսեց մի ձայն և բարի վրայ երևաց մի պայծառ լոյս, որի չորս կողմը փայլում էին տասներկու հրեշտակներ, լսեց նոյնպէս հրեշտակների փառաբանութեան ձայներ։ Սրանից

յետոյ տեսնում է մի լուսեղէն խաչ, որ վերանում է իւր տեղից և մտնում եկեղեցի ու կանգնում սեղանի առաջ: Այն ժամանակ Թոդիկն ու իւր աշակերտը մտնում են եկեղեցի և տեսնելով Քրիստոսի խաչը փայլելիս՝ երկրպագում են: Իսկ լուսեղէն սիւները տաճարկու օր մնում են, որ և հեռաւոր տեղի բնակիչներին ևս տեսանելի է լինում. ուստի մեծ բազմութիւն է ժողովվում այնտեղ, որոնց հետ էր և մեր Ներսէս Գ. Շինող Հայրապետը, որ սիւների տեղը շինեց տաճարկու եկեղեցի: Ներսէս Հայրապետը հոկտեմբեր ամսում տօն սահմանեց, որ և կոչուեց «Վարագայ ս. Խաչի» տօն:

23.

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Երբոր Կիլիկիայում կազմուեց հայկական նոր իշխանութիւն՝ «Ռուբինեան հարբատութիւն» անունով, և Կիլիկիան դարձաւ հայկական մի մեծ գաղթավայր, Հայրապետական Աթոռն էլ տեղափոխուեց այնտեղ: Բուն Հայաստանում մնացածները կոչվում

էին Արևելեան հայք, իսկ դէպի արևմուտք և Կիլիկիա գաղթածները՝ Արևմտեան հայք: Արևելեան հայք թանգ գնահատելով իրանց եկեղեցու ազգային ինքնուրոյնութիւնը՝ չէին կամենում որևէ ուրիշ եկեղեցու հետ միանալ, իսկ Արևմտեան հայք, յատկապէս Պահլաւունի կաթողիկոսները, ձգտում էին միութեան:

Տասնևերկուերորդ դարում իւր սրբակրօն և առաքինի կեանքով փայլում է Ներսէս Կլայեցին, որ իւր իմաստալից գրուածքների համար անուանուեց շնորհալի: Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսը խորին ծերութեան հասնելով, Հռոմկլայում ժողովականների համաձայնութեամբ Ներսէս Կլայեցուն, որ իւր եղբայրն էր, 1166 թ. ձեռնադրում է Կաթողիկոս ամենայն Հայոց, և ինքը երեք ամսից յետոյ վախճանուելով Հայրապետական գահի իշխանութիւնը թողնում է Ներսէսին:

Զնայելով որ նորընտիր Հայրապետի առաջ դրուած էր Յունաց եկեղեցու հետ միութեան մեծ և աղմկալից խնդիրը, որի դէմ պարտաւոր էր միշտ մաքառելու, այ-

նուամենայնիւ նախ և առաջ իւր մեծ ուշադրութիւնը դարձրեց Ազգի և Եկեղեցու ներքին գործերի վրայ։

Ներսէսը գրեց մի «Ընդհանրական» կոնդակ՝ Աստուածային հոգւով և լի իմաստութեամբ. նա իւր քաղցր և ազդու խօսքերով ու յորդորներով խրատում է եկեղեցու առանձին-առանձին դասակարգերին՝ իւրաքանչիւրին հասկացնելով իւր պարտականութիւնը։

Ներսէս Շնորհալին չբաւականացաւ իւր հայրապետական ներքին գործերի բարեկարգութիւններով, այլ թողեց նաև շատ գրաւոր աշխատութիւններ, այն է՝ շատ հոգելից երգեր ու շարականներ, Հայոց հաժառօտ պատմութիւն, մի չափաբերական գրուածք, որ կոչվում է «Ցիսուս Որդի» և այլ գրուածքներ։

Ապա զբաղուեց Յունաց կողմից առաջարկուած՝ եկեղեցիների միութեան խնդրով, որ սկիզբն էր առել դեռ իւր նախորդի ժամանակ։ Ներսէսը յաջորդելով իւր եղբայր Գրիգոր Պահլաւունուն, զանազան նամակներ գրեց Յունաց Մանուէլ կայսեր

և Միքայէլ պատրիարքին՝ ներկայացնելով նրանց Հայոց եկեղեցու դաւանութիւնը։ Կայսրը և պատրիարքը սիրա առնելով Ներսէսի նամակներից՝ պատգամաւորներ ուղարկեցին նրա մօտ, որոնք եկան Հռոմկլայ և երկար խօսեցին հաւատի և եկեղեցու արարողութիւնների վրայ, որի միջոցին պարզուեցին միքանի թիւրիմացութիւններ, որ երկու եկեղեցիների մէջ վէճերի առարկայ էին դարձել դարերի ընթացքում։ Պատգամաւորները Հայ եկեղեցու դաւանութեան և եկեղեցական կարգերի մասին Ներսէսից թուղթ ստացան և դարձան Կոստանդնուպոլիս. Յոյները հաւանութիւն տուին։ Կայսրը և Կ. Պոլսի յոյն պատրիարքը ևս միութեան գործը 'ի կատար ածելու համար թուղթ ուղարկեցին։ Այս միջոցին Ներսէս Շնորհալի կաթողիկոսը նկատելով գործի յաջողութիւնը, Հայաստանի բոլոր եպիսկոպոսներին միաբան ժողովով նամակներ գրեց և խնդրեց նրանց համաձայնութիւնը այս խնդրում։ Սակայն դեռ պատասխան չստացած՝ վախճանվում է 1173 թ. 75 տարեկան հասակում, եօթը տարի վարելով իւր իշ-

խանութիւնը, և միաբանութեան խորհուրդը մնում է անկատար: Շնորհալուն յաջորդում է իւր եղբօր որդի Գրիգորը:

24.

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ ԵՒ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Գրիգոր կաթողիկոսը՝ մականուանեալն Տղայ, յաջորդելով Շնորհալուն, հետևեց իւր նախորդներին՝ Յունաց հետ միաբանական սէր և համերաշխութիւն ունենալու խնդրում: Նա հաստատեց եկեղեցական այն բոլոր կարգերը, ինչ որ սահմանել էր Շնորհալին: Սա միութեան գործը 'ի կատար ածելու համար հայ եպիսկոպոսների հետ թղթակցութիւն անելուց յետոյ, Հռոմկլայում ժողով գումարեց 1179 թուին: Այս ժողովում Ներսէս Լամբրոնացին մի ազդու ատենաբանութեամբ կամենում էր ցոյց տալ անմիաբանութիւնից յառաջ գալիք վնասները և միաբանութիւնից՝ մեծամեծ օգուտները: Այս խնդրի առիթով Յունաց միտրոպոլիտները ևս ժողովը արին Կ. Պոլսում և առաջարկեցին Հայոց՝ ընդունել Քաղկեդոնի ժողովը: Կաթողիկոսը ժողով

գումարելով՝ հաւանութիւն տուաւ այս առաջարկութեանը և միայն 33 եպիսկոպոսների ստորագրութեամբ ժողովի վճիռն ուղարկեց Կ. Պոլիս յատուկ թղթատարով, որոնք արգելքի հանդիպելով՝ Կեսարիայից վերադարձան: Երբ Գրիգոր Տղայ պատրաստվում էր նորից ժողովի վճիռն ուղարկել, լսուեց Մանուէլ կայսեր և Միքայէլ պատրիարքի մահը, որով և միութեան խնդիրը դարձեալ մնաց անկատար:

Թէև կայսեր և պատրիարքի մահով միութեան խնդիրը մնաց առկախ, այնուամենայնիւ Հռոմկլայի ժողովի վճիռը և Լամբրոնացու ատենաբանութիւնը մեծ դրժդոհութեան առիթ էր տուել մանաւանդ Արևելեան հայերին: Բուն Հայաստանցիք, այն է՝ Զորագեացիք, Սիւնեցիք, Շիրակեցիք և Սանահնեցիք, որոնց գլխաւորն էր Սանահնու վանքի վանահայր Գրիգոր Տուտէորդին, միութեան մասին լսել անգամ չէին կամենում: Գրիգոր Տուտէորդին մի շատ համարձակ նամակով յանդիմանում է Գրիգոր կաթողիկոսին և նրա բոլոր խորհրդակիցներին: Արևելեան Հայք այլևս չէին

ցանկանում Գրիգորին կաթողիկոս ճանաչել, այլ կամենում էին Անի քաղաքի Բարսեղ անունով մի եպիսկոպոսի օծել կաթողիկոս:

Յունական եկեղեցու միութեան խնդիրը առկախ մնալուց յետոյ ատելութիւնն աւելի ևս բորբոքուեց Հայերի և Յոյների մէջ նամանաւանդ այն ժամանակ, երբ Հայերը համակրութիւն ցոյց տուին դէպի խաչակիրները, երբ նրանք գնում էին Պաղեստին՝ ազատելու Երուսաղէմը մահմեդականներից: Հայոց Լևոն իշխանը և Գրիգոր կաթողիկոսը խաչակիրներին ընդառաջ գնացին մինչև Սիլևկիա քաղաքը և բերին Կիլիկիա, ուր և տալով նրանց մեծ պաշար, սիրով հիւրընկալեցին: Սրա համար Գերմանիայի Ֆրիդրիկոս կայսրը Հայոց կաթողիկոսին և իշխանին մեծամեծ խոստումներ է անում, բայց տակաւին Եւրոպա չվերադարձած՝ մեռնում է և բոլոր խոստումները մնում են անկատար:

Գրիգոր Տղայ 20 տարի Հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ 1193 թ. վախճանուեց և թաղուեց Հռոմկլայում իւր նախորդների մօտ:

Ներսէս Շնորհալու վերջին տարիներում և Գրիգոր Տղայի կաթողիկոսութեան օրերում նշանաւոր էր Տարսոնի եպիսկոպոս Ներսէս Լամբրոնացին, որի հայրն էր Լամբրոնի տէր Օշին իշխանը: Վերջինս ամուսնանալով Շնորհալու Շահանդուխտ դստեր հետ, ունեցաւ հինգ արու զաւակ, որոնցից մինն էր Ներսէս Լամբրոնացին, որի նախկին անունն էր Սմբատ: Ներսէսը մօր արգանդից նուիրուած լինելով հոգևոր կոչման, ծնողները տարան նրան Սկևռայ վանքը և յանձնեցին ոմն Յովհաննէս անունով վարդապետի դաստիարակութեան: Նա լաւ սովորեց յունարէնը, լատիներէնը և եգիպտերէնը. 16 տարեկան էր, երբ մեռաւ նրա հայրը. մայրը տարաւ նրան իւր հօրեղբայր Շնորհալու մօտ և ձեռնադրել տուաւ աբեղայ. 18 տարեկան հասակում նա արդէն քարոզչի պաշտօն ստացաւ իւր հայրենի քաղաքում, ուր մեծ յառաջադիմութիւն ցոյց տուաւ և իւր բնական ճիրքով ու պերճախօսութիւնով զարմացնում էր ամենքին, ստանալով մեծ քարոզչի հռչակ: Այս առանձնանալով

վանքը, պարապում էր գրուածքներով և թարգմանութիւններով։

Ներսէսը իւր 23 տարեկան հասակում, այն է՝ 1176 թ. Գրիգոր կաթողիկոսից ձեռնադրուեց Լամբրոնի արք-եպիսկոպոս, որ սմենայն աշխարհութեամբ կառավարում էր իւր հօտը։ Սակայն նկատելով որ առաջնորդական պաշտօնը արգելք է լինում իւր գրաւոր աշխատութիւններին, թողեց իւր վիճակը և կրկին վանք գնաց, ուր գրեց սուրբ պատարագի մեկնութիւնը և նորից վերադառնալով իւր աթոռը, սկսեց հովուել իւր վիճակը։ Այս գրեց բազմաթիւ գրուածքներ, մեկնութիւններ, ճառեր և շարականներ, գրեց նոյնպէս «Հարանց վարք» անունով գիրքը։

Ներսէս Լամբրոնացին՝ իւր համարձակ և ազգու ատենախօսութեան համար համարվում է արժանաւոր յաջորդ Պօղոս առաքելի։ Ներսէս Լամբրոնացին վախճանուեց 1198 թ. 45 տարեկան հասակում։

ԾՐԱՆ Դ

19-ՐԴ ԴԱՐԻ ՄԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

25.

ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

18-երորդ դարի վերջին կաթողիկոսը համարվում է Ղուկաս Կարնեցին, որ 1780 թուին ընտրուելով, վախճանուեց 1799-ի դեկտեմբերի 27-ին։ Ղուկաս կաթողիկոսի մահից յետոյ կաթողիկոս ընտրուեց Ռուսաստանի առաջնորդ Յովսէփ արք-եպիսկոպոս Երկայնաբազուկ-Արղութեանց 1800 թ. և հաստատուեց Ռուսաց և Տաճկաց կառավարութիւններից, և երբ ուղևորվում էր դէպի ս. Էջմիածին օծումն ընդունելու, Թիֆլիզում ընդունուեց մեծ հանդէսով, բայց միքանի օրուայ հիւանդութիւնից յետոյ վախճանուեց 19 մարտի 1801 թ., որի մարմինը տարան և թաղեցին ս. Էջմիածնում։

Յովսէփ արք-եպիսկոպոսը իւր երկարամեայ առաջնորդութեան ժամանակ թէ Ռուսաց արքունիքից և թէ հայ ժողովրդից վայելում էր մեծ յարգանք իւր հաւատարիմ և օգտաւէտ գործունէութեանց համար: Նրա յորդորմամբ Խրիմի հայերը մեծ բազմութեամբ գաղթեցին Դօն գետի հովիտը և այնտեղ շինեցին մի նոր քաղաք Նոր-Նախիջևան անունով. նոյն տեղը շինեց նոյնպէս մի քանի գիւղեր՝ բնակեցնելով այնտեղ հայ ժողովուրդ և ձեռք բերաւ նրանց համար զանազան արտօնութիւններ. շինեց ս. Խաչ վանքը, որ քաղաքից հեռու է մի ժամով. իսկ Հաշտարխան քաղաքում շինեց մի եկեղեցի Պետրոս և Պօղոս առաքեալների անունով:

Յովսէփի մահից յետոյ կաթողիկոս ընտրուեց Կ. Պօլսի Դանիէլ պատրիարքը, սակայն մինչև սրա ս. Էջմիածին հասնելը, Էջմիածնի միաբան, Էնեգէթցի Դաւիթ եպիսկոպոսը իւր ազգականների ձեռնտուութեամբ Երևանի սարդարի հրամանով կաթողիկոսութիւնը գրաւեց և նոյն թուի ապրելի 28-ին օծումն ընդունեց,

որով և ծագեց Դաւիթ-Դանիէլեան վէճը և շարունակուեց բաւական ժամանակ, մինչև որ Ազգի իշխանների միջոցով Դանիէլը՝ որ 1802 թ. մայիսի 25-ին Իւշ-բիլիսայի ս. Յովհաննէսի վանքում օծուել էր, ժառանգեց կաթողիկոսական գահը և վախճանուեց 1810 թուին: Սրան յաջորդեց նոյն թուի նոյեմբերի 6-ին Հաշտարխանի Եփրեմ արք-եպիսկոպոսը:

Եփրեմը կաթողիկոսանալով, կարողացաւ իւր մեղմ բնաւորութեամբ վերջ դնել Դաւթեանց և Դանիէլեանց վէճերին: Սրա ժամանակ ընդարձակուեց Էջմիածնի գրատունը և նորոգուեց տաճարի տանիքը. բայց մի կողմից իւր առատաձեռնութիւնը և միւս կողմից պարսկական բռնութիւնները պատճառ դարձան Աթոռի ծանր պարտքերի տակ ընկնելուն: Եփրեմ կաթողիկոսը չկարողանալով վճարել այդ պարտքը, դիմեց Ռուսաց տէրութեան սահմանը, գնաց Շուշի, յետոյ 1822-ին Հախպատ և ապա Տփխիս, և երբ Ռուսաց տէ-

բութիւնը նուաճեց Երևանը, այնուհետև միայն կաթողիկոսը վերադարձաւ իւր Հայրապետական Աթոռը ս. Էջմիածին. բայց որովհետև ծերութեան պատճառով արդէն աչքերի լոյսը պակասել էր, ուստի 1830 թ. հրաժարուեց գահից, բան տարի Հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ: Այնուհետև ապրեց այլևս հինգ տարի, վախճանուեց 1835 թ. և թաղուեց միաբանութեան հասարակաց գերեզմանատանը, ինչպէս որ ինքն առաջուց կտակել էր:

26.

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ը. ԿԱՐԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Եփրեմ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ 1831 թ. ս. Էջմիածնում գումարուած ժողովով կաթողիկոս ընտրուեց Յովհաննէս արք-եպիսկոպոսը, որ նոյն տարուայ յուլիսի 30-ին կայսերական հրովարտակով հաստատուեց, իսկ նոյեմբերի 8-ին Հրեշտակապետաց տօնի օրն ընդունեց կաթողիկոսական տուրբ օծումն: Կաթողիկոսն

այնուհետև միքանի կարևոր կարգադրութիւններ անելուց յետոյ՝ որոնք վերաբերում էին ս. Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսի գերիշխանութեան և Տաճկաստանի յարաբերութեանը, սկսեց զբաղուել ներքին կարգադրութեամբ, այն է՝ վերանորոգեց տպարանը և տպագրեց եկեղեցական գրքերը, վճարեց ս. Էջմիածնի բոլոր պարտքերը և մինչև անգամ մի գումար ևս յետաձգելով, դրեց արքունական գանձարանը՝ Մայր Աթոռի անունով. շինեց նաև ս. Էջմիածնում միքանի կարևոր շինութիւններ: Սրա կաթողիկոսութեան օրով 1836 թ. գրուեց և կայսրից հաստատուեց այն գրաւոր Սահմանադրութիւնը (Պոլոժենիա), որով պէտք է կառավարուէին Ռուսաստանի Հայոց եկեղեցիները և եկեղեցական վարչութիւնները: Սակայն այդ կանոնադրութեան հիման վրայ 1837 թուին փետրվարի 22-ին ս. Էջմիածնում բացուեց Սինոդը:

Յիշեալ Բարձրագոյն կարգադրութեան համաձայն Ռուսահայերն ունեցան հետևեալ հոգևոր հաստատութիւնները.

Ս. Էջմիածնում Սինոդ, որի նախագահն

է Վեհափառ Հայրապետը ութ անդամներով, որոնք կարող են լինել եպիսկոպոսներ և վարդապետներ:

Ռուսաստանի վեց վիճակում բացուեցին Կոնսիստորիաներ, որոնց նախագահներն են թեմական առաջնորդները չորս անդամներով: Անդամներից մինը լինում է վարդապետ կամ աւագ քահանայ, իսկ մնացածները քահանաներ: Ռուսաստանի վեց վիճակները կազմում են հետևեալ թեմերը.

1. Երևանայ վիճակ, 2) Նոր-Նախիջևանի կամ Բեսարաբիայի, 3) Հաշտարխանի, 4) Վրաստանի և Իմերէթի, 5) Շիրուանու կամ Շամախու և 6) Ղարաբաղի վիճակ:

Իւրաքանչիւր թեմի մէջ՝ որոշուած գաւառական քաղաքներում բացուած են Հոգևոր կառավարութիւններ, որոնց նախագահում են տեղական յաջորդները, որ սովորաբար լինում են վարդապետ կամ աւագ քահանայ անդամներով:

Գործակալներ կամ եկեղեցիների բարեկարգութեան վերատեսուչներ, որոնք մեծ քաղաքներում ընտրվում են Առաջնորդից, իսկ գաւառական քաղաքներում Յաջորդից

կամ Հոգևոր կառավարութիւնից, որոնք կատարում են իրանց մերձաւոր Հոգևոր իշխանութեան յանձնարարութիւնները և հսկում եկեղեցիների և եկեղեցականների բարեկարգութեան վրայ. սրանք սովորաբար լինում են քահանաներ:

Յովհաննէս Կարբեցին՝ վարելով իւր իշխանութիւնը տասնեմի տարի, վախճանուեց 26 մարտի 1842 թ. և թաղուեց ս. Էջմիածնի զանգակատան հիւսիսային կողմում:

27.

ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Յովհաննէս Կարբեցու մահուանից յետոյ՝ նոր Պոլսոյ Ենիայի համաձայն 1843 թուին Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի ազգայինների պատգամաւորների մասնակցութեամբ միաձայն ընտրուեց կաթողիկոս Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդ Ներսէս արք-եպիսկոպոս Աշտարակեցին և Նիկողայոս Ա. կայսրից հաստատուեց նոյն թուականի օգոստոսի 10-ին:

Ներսէսը՝ իբրև հանճարեղ և գործունեայ

հոգևորական շատ յարգուած էր ամենքից: Սա Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդութեան ժամանակ 1822 թ. Թիֆլիզում հիմնեց մի հոյակապ ուսումնարան, որ կոչվում է այժմ Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոց՝ հիմնադրի անունով, որպէսզի Հայոց լեզուն և կրօնի ուսումն առաջ տարուի: Նա կարողացաւ նիւթական ապահովութիւն տալ դպրոցին՝ ձեռք բերելով զանազան անշարժ կալուածներ թէ ս. Էջմիածնի կալուածների արդիւնքով և թէ ժողովրդի առատաձեռն նուիրատուութեամբ: Սա էր, որ առաջին անգամ սահմանեց եկեղեցիներում չափաբերական մատեաններ ծնուածների, պսակուածների և վախճանուածներին գրելու համար, նոյնպէս երէց-փոխներ՝ իւրաքանչիւր եկեղեցում, տալով նրանց հաշուեմատեաններ՝ գրելու եկեղեցական արդիւնքները, որ մինչև այդ ժամանակ աւագ քահանաների ձեռքումն էին: 1826 թուին Պարսից պատերազմի ժամանակ Ներսէսը Երևանի և ս. Էջմիածնի ազատութեան համար բաւական աշխատեց Ռուսաց զօրքի հետ, և երբ նա նուիրուած

իւր հիմնած դպրոցին աշխատում էր նրան բարեկարգել՝ հրաւիրելով Փարիզից Տահան-Զրպետ դիտնականին և Մոսկուայից Ալամդարեան հռչակաւոր վարդապետին կրօնուսոյց և ուրիշ բանիմաց անձանց, յանկարծ 1828 թ. նշանակվում է Բեսարաբիայի առաջնորդ և ուղևորվում է իւր նոր պաշտօնատեղին:

Ներսէսն իբրև կաթողիկոս՝ Կ. Պոլսի պատրիարքարանի հետ պաշտօնական յարաբերութիւններ վերահաստատելուց յետոյ, սկսեց զբաղուել ս. Էջմիածնի շինութիւններով, ս. Գայիանէի վանքին մօտիկ մի անտառ ձգեց և անտառին կից շինեց մի ընդարձակ լիճ և այսպիսով բաւական մաքրուեց ս. Էջմիածնի ծանրատար օդը: Մի մշակած կանոնադրութեամբ հաստատեց ս. Էջմիածնում Վանական կառավարութիւն, որ կազմուած է մի նախագահից և երկու անդամից: Ս. Էջմիածնում հիմնեց նաև շերամապահութեան և շաքարի գործարան, բայց յաջողութիւն չունենալով դադարեց: Եւ որովհետև Ներսէսը իւր գլխաւոր ուշադրութիւնը դարձրեց Ամթոռի տնը-

տեսական մասը կանոնաւորելու, այս պատճառով դպրոցի և տպարանի գործերը մնացին անխնամ։ Վիճակում նշանակում էր կառավարիչներ, փոխանակ հաստատուն Առաջնորդի, և յաջորդների ու գործակալների պաշտօնի մէջ կարգում էր վիճակներում աշխարհական մարդիկ, որոնցից ստանալով վիճակային բոլոր արդիւնքները, գործադրում էր իւր ձեռնարկած շինութիւնների վրայ։

Ներսէս կաթողիկոսը մեծ մասը անց էր կացնում Թիֆլիզում, ուր և վախճանուեց յանկարծակի մահուամբ 13-ն փետրուարի 1857 թուի։ Մարմինը մեծ հանդէսով փոխադրեցին ս. Էջմիածին և թաղեցին Դանիէլ կաթողիկոսի դերեզմանի մօտ։ Ներսէս Աշտարակեցու տապանաքարի վրայ արձանագրուած է՝ «Պաշտպան Հայրենեաց» նշանաւոր խօսքերը։ Իսկ Ներսիսեան դպրոցը՝ իւր հիմնադրի յիշատակը յաւերժացնելու համար ամենայն տարի փետրվարի 14-ին, Տեառնընդառաջի օրը, Թիֆլիսի բոլոր հոգևորականների մասնակցութեամբ հոգեհանգիստ է կատարում։

28.

ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Ներսէս Ե. կաթողիկոսի մահից յետոյ ս. Էջմիածնի ընտրողական ժողովում կաթողիկոս ընտրուեց Կոստանդնուպօլսի նախկին պատրիարք Մատթէոսը 1858 թուին և կայսերական հրովարտակով հաստատուելով, նոյն թուի օգոստոսի 15-ին ընդունեց Հայրապետական ս. Օծումն։

Մատթէոս կաթողիկոսը՝ իւր իշխանութիւնը ստանձնելուց յետոյ աւելի զբաղվում էր գրական աշխատութիւնով, քան Հայրապետական գործերով։ Ունի հայերէն գրաբար և աշխարհաբար զանազան կրօնական բովանդակութեամբ 12 հատոր գրքեր, որոնց մէջ նշանաւոր են «Հանդէս ուղղափառութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ» և «Բարի մարդ և բարի քրիստոնեայ» գրքերը։ Ներսիսեան դպրոցի կառավարութեան համար տուաւ մի նոր կանոնադրութիւն՝ տպագրուած 1866 թուին։ Թէ թեմական և թէ գաւառական քաղաքներում բաց արաւ երկսեռ ծխական դպրոցներ և իւր ժողովրդասէր ընաւորութիւնով

վանքերի եկամուտները յատկացրեց դըպրոցներին և այսպէս ութ տարի կառավարելով ս. Էջմիածնայ Աթոռը, վախճանուեց 1865 թուին և թաղուեց ս. Գայիանէի վանքի գաւթում:

Հոգևոր հաստատութիւններ Տաճկաստանում և Պարսկաստանում:

Որովհետև Հայ ժողովուրդը բացի Ռուսաստանից գտնվում է նաև Տաճկաստանում և Պարսկաստանում, ուստի ամենայն Հայոց Հայրապետը Ռուսաստանի և Պարսկաստանի Հայոց բոլոր հոգևոր գործերը իւր անմիջապէս իշխանութեամբ է կառավարում, իսկ Տաճկաստանինը՝ Կոստանդնուպոլսի պատրիարքի, որ սովորաբար լինում է արք-եպիսկոպոս՝ ձեռնադրուած ս. Էջմիածնում ամենայն Հայոց Կաթողիկոսից և համարվում է փոխանորդ Կաթողիկոսի: Բացի Կ. Պոլսի պատրիարքից կայ և Երուսաղէմի պատրիարքը, որ կառավարում է Պաղեստինի հայ եկեղեցիները՝ Կոստանդնուպոլսի կենդրոնական իշխանութեան հըսկողութեան տակ: Կ. Պոլսի հայ պատրիարքը եկեղեցական վարչական մասը կառավարում է ինքնին, իսկ կրօնական խընդիրներում հրահանգվում է ս. Էջմիածնի ամենայն Հայոց Կաթողիկոսից:

Բացի Կ. Պոլսի և Երուսաղէմի պատրիարքներից Տաճկաստանում կան նաև երկու մասնաւոր կաթողիկոսներ, այն է՝ Սսի և Աղթամարի, որոնք իբրև վիճակաւորներ՝ իրանց թեմերում գործում են Կ. Պոլսի պատրիարքի իրաւասութեան տակ, միայն իրաւունք ունին իրանց վիճակների համար ս. մեռոն օրհնել և պատրիարքի կարգադրութեամբ եպիսկոպոսներ ձեռնադրել:

Տաճկաստանում սահմանուած են հետևեալ Հոգևոր-վարչական հաստատութիւնները. 1) Ազգային ընդհանուր ժողով, որ գումարվում է Կ. Պոլսում պատրիարքի նախագահութեամբ ու մի աշխարհականի ատենապետութեամբ և 120 անդամների մասնակցութեամբ. 2) Կրօնական ժողով՝ նախագահութեամբ պատրիարքի և ատենապետութեամբ մի եպիսկոպոսի, որի անդամները հոգևորականներ են. 3) Քաղաքական ժողով՝

նախագահութեամբ դարձեալ պատրիարքի և աշխարհական ատենապետի. անդամներն են աշխարհական անձինք, և 4) Խառն ժողով՝ երբ Կրօնական և Քաղաքական ժողովները միանում են:

Պարսկաստանն ունի երկու առաջնորդ. առաջինը Ատրպատականի, որի առաջնորդանիստն է Թաւրիզը, երկրորդը Պարսկաստանի և Հնդկաստանի, որի առաջնորդանիստն է Սպահան: Սրանք անկախ միմեանցից՝ ազատ կերպով կառավարում են իրանց թեմերը և միայն պատասխանատու են ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջ:

Մատթէոս կաթողիկոսի մահից յետոյ 1866 թուին ս. Էջմիածնում գումարուած Ազգային ժողովում ընտրուեց Գէորգ արքեպիսկոպոս, Բրուսայի վիճակի առաջնորդը, որ նոյնպէս եղած էր Կ. Պոլսի պատրիարք և հաստատուելուց յետոյ 1867 թ. մայիսի 20-ին ս. Էջմիածնում ընդունեց Հայրապետական ս. Օծումն Գէորգ Դ. անունով:

Գէորգ Դ. իւր օծումից յետոյ, առաջին գործը համարեց ներկայանալ կայսեր և

ապա 1868 թուին վերադառնալով ս. Էջմիածին, զբաղուեց Աթոռի ներքին բարեկարգութեամբ: Նրա ձեռնարկած նշանաւոր գործերն են՝ «Արարատ» ամսագրի հրատարակութիւնը, թանգարանը, Գէորգեան ճեմարանը և այլ շինութիւնները ս. Էջմիածնում: Սրա ժամանակ հայկական ձայնագրութիւնը պարտաւորական դարձաւ իւրաքանչիւր քահանայացուի համար: Որոշ կանոններ հրատարակեց նշանագրութեան, տգէտ քահանայացուների և այլ ներքին բարեկարգութիւնների համար. բայց ափսոս որ ոչ մինը գործնական նպատակի չհասաւ, որովհետև նրա հրատարակած կանոնները շատ անգամ 'ի չարն էին գործ դնում իր ստորագրեալները. օրինակ՝ փոխանակ պակասելու տգէտ քահանաների թիւը, ընդհակառակը՝ օր ըստ օրէ աճում էր:

Գէորգ կաթողիկոսը տոկուն բնաւորութիւն ունենալով, ինչպէս որ եռանդուն գործունէութեամբ մաքառում էր ներքին գործերի խոչընդոտների դէմ, այնպէս էլ հեռատես և զգոյշ էր արտաքին բոլոր յարաբերութիւնների մէջ: Այսպէս վարելով Հայ-

բապետական գահը 1867—1882 թ., վախճանուեց նոյն թուի դեկտեմբերի 6-ին և թաղուեց ս. Էջմիածնի զանգակատան հիւսիսային կողմում։

29.

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ԱԶԳԻՍ ՆԵՐԿԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՐԻԿ

Գէորգ Դ.-ի մահից յետոյ ս. Էջմիածնում կատարուեց կաթողիկոսական ընտրութիւն և այս անգամ միաձայն ընտրուեց Զմիւռնիայի առաջնորդ Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրադեանը և ձայնից համեմատական առաւելութեամբ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մակար արք-եպիսկ., վերջինս հաստատուեց 1886 թուին։ Մակար կաթողիկոսը իբրև խիստ կրօնական՝ շատ նախանձախնդիր էր դէպի մեր եկեղեցական աւանդութիւնները, որի համար նա յայտնի էր իբրև աւանդապահ եկեղեցու, ինչպէս որ ինքն էլ իւր համար շատ անգամ ասում էր. «Թող ժողովուրդը ինձանից ոչ մի նոր բան չսպասէ, բաւական է, որ կարողանամ եղածը պահպանել»։ Այդ

խօսքերն ուղղակի բնորոշում են նրան։ Նա բնաւորութեամբ լինելով վերին աստիճանի զգոյշ, շատ անվստահ էր մի նոր գործի ձեռնարկութեան ժամանակ։ Սրա միջնորդութեամբ բացուեցին մեր փակուած ծխական դպրոցները և այդ դպրոցների բարեկարգութեան համար կանոններ և ուսուցիչների համար վարկ սահմանուեց։ Հինգ տարի վարելով Հայրապետական իշխանութիւնը, վախճանուեց 1891 թ. ս. Էջմիածնում և թաղուեց կաթողիկոսների շարքում։

Մակար կաթողիկոսի մահից յետոյ ս. Էջմիածնի ժողովն ընտրեց Մկրտիչ արք-եպիսկոպոս Խրիմեան Հայրիկին և Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանին *)։

1893 թ. Խրիմեան Հայրիկը հաստատուեց կայսրից Կաթողիկոս ամենայն Հայոց։

Նորին սուրբ Օծութիւն Տ. Մկրտիչ Ա. վարում է այժմ Հայրապետական իշխանութիւնը ժառանգելով Լուսաւորչական գահը, որի յարատևութեան և Գահակալի բարոյութեան ու ազգօգուտ գործունէութեան

*) Որ ընտրուեց Կ. Պոլսի պատրիարք 1895 թ.։

համար աղօթում է համայն հայ ժողովուրդը և Հայաստանեայցս սուրբ եկեղեցին։

30.

ՀԱՅՈՑ ՆՇԱՆԱՒՈՐ ՎԱՆՔԵՐԸ

Քրիստոնէական առաջին դարերում վանական և կրօնաւորական վսեմ կեանքին նուիրվում էին այնպիսի անձինք, որոնք իրանց հաստատուն հաւատով ցանկանում էին հասնել գերագոյն և յաւիտենական երջանկութեան՝ մեռցնելով իրանց մէջ աշխարհային ամեն տեսակ հրապուրիչ վաղանցուկ ցանկութիւնները, և այս նպատակի համար հեռանալով աշխարհից ընտրում էին վանքերը, ուր նուիրվում էին միմիայն Աստուածահաճոյ գործերին։

Հայոց մէջ առաջին անգամ Դ. դարում կրօնաւորական կեանքը սահմանեց ս. Գրիգոր Լուսաւորիչը. երբ Կեսարիայից բերաւ իւր հետ Անտոն և Կրոնիդէս կրօնաւորներին և Տարօն նահանգում հիմնելով առաջին վանքն ու այնտեղ ամփոփելով ս. Կարապետի մասունքը՝ յանձնեց յիշեալ երկու կրօնաւորներին։ Այդ վանքը կոչուեց

Գլակայ կամ Մշու ս. Կարապետի վանք։

Վանքերի մէջ ամենից նշանաւորը՝ թէ իւր անցեալով և թէ ներկայով հանդիսանում է մեր ս. Էջմիածինը, որ հիմնեց Վաղարշապատում ս. Գրիգոր Լուսաւորիչը։ Նշանաւոր է նրա համար, որ այնտեղ են գտնվում Հայոց Հայրապետի Աթոռը և մեր նշանաւոր սրբութիւնները, այնտեղ են օծվում մեր կաթողիկոսները և ձեռնադրվում եպիսկոպոսները, այնտեղ է օրհնվում ս. մեռոնը և նա է իսկապէս հայ-քրիստոնեաների կրօնական միութեան և լուսաւորութեան կենդրոնը։

Ս. Էջմիածնի շուրջն են գտնվում ս. Հռիփսիմէի, ս. Գայիանէի և Շողակաթի վանքերը, որ նոյնպէս հիմնարկուած են ս. Գրիգոր Լուսաւորչից. Խոր Վիրապը, սուրբ թարգմանիչ Մեսրոպի անունով եկեղեցին Օշական գիւղում, և այլն։

Երևանի թեմում նշանաւոր են կարմիր վանքը Հին-Նախիջևանի մօտ, Խնծկոնից վանքը Անի քաղաքի մօտ, հռչակաւոր Տաթևը, Սևանայ վանքը, ս. Գեղարդայ վանքը, ս. Մողնին, Երնջակի ս. Կարապետը, Աղէք-

սանդրապոլի մոտ Հառիճոյ վանքը, և այլն։

Տփխիսի թեմում՝ Հախպատ, Սանահին, Հաղարծին և Գօշայ հռչակաւոր վանքերը Գուգարաց աշխարհում, Զարէքայ վանքը Գանձակի նահանգում, և այլն։

Ղարաբաղի թեմում՝ Գանձասար, Ամարաս և Խօթայ վանքերը, որոնց մէջ երբեմն գոյութիւն են ունեցել դպրոցներ, բայց այժմ նշանաւոր են իրանց անցեալով և ճարտարապետական փառաւոր կերտուածներով։

Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմում՝ Խրիմի ս. Խաչ վանքը, որի անունով Նոր-Նախիջևանի «Սուրբ-Խաչ» վանքը հիմնեց՝ Յովսէփ արք-եպիսկոպոս Աղղուիանը՝ հայերին Խրիմից այնտեղ գաղթեցնելուց յետոյ։

Ս. Էջմիածնից յետոյ նշանաւոր է նաև Երուսաղէմի սուրբ Յակոբեանց վանքը բազմաթիւ միաբաններով և պատրիարքով։ Երուսաղէմն ունի դպրոց և տպարան, ուր հրատարակվում են զանազան հեղինակութիւններ։ Բացի ս. Երուսաղէմից Տաճկաստանի գաւառներում ևս կան վանքեր, օրինակ՝ Արմաշու ս. Աստուածածին անունով վանքը, որ նոյնպէս ունի դպրոց։ Վարագայ ս. Նշանի վանքը՝ Վանայ մոտ Վարագում, երբեմն Խրիմեան Մկրտիչ վարդապետի (այժմ Աղգիս Վեհափառ Հայրապետ) վանահայրութեան օրով կար դպրոց և տպարան, ուր հրատարակվում էր «Արծուի Վասպուրական» ամսագիրը։

Վանայ ծովի կղզիների վրայ կան Աղթամարայ վանքը, ուր նստում է Աղթամարի կաթողիկոսը, Կտուց և Լիմ անապատները իրանց խստակրօն միաբաններով և ս. Բարդուղիմէոս առաքեալի վանքը։

Պարսկաստանում են մեր առաջին լուսաւորիչներից մէկի—ս. Թադէոս առաքեալի վանքը պարսկահայոց Մակու քաղաքի Աղբակ գաւառում, Արտազու դաշտում, և Զուղայի ս. Ամենափրկիչ վանքը Սպահանում։ Սրանք թէպէտ ժամանակով յայտնի են եղել իրանց նիւթական և բարոյական ազդեցութեամբ, սակայն ներկայումս այն չեն ներկայացնում շնորհիւ անկիրթ մահմեդականների։ Միայն Զուղայի

Ամենափրկչեան վանքն է, որ լինելով աթոռ Հնդկաստանի և Պարսկաստանի առաջնորդի, օր ըստ օրէ պայծառանում է դպրոցական հաստատութիւններով և վանական բարեկարգութեամբ։

Երկու վանք էլ ունին հայ-կաթոլիկները՝ մէկը Վենետկի ս. Ղազարի վանքը, որի հիմնարկողն է հայազգի նշանաւոր Մխիթար Սեբաստացի կրօնաւորը։ 17-րդ դարում այս ուսումնասէր և գործունեայ կրօնաւորը հիմնելով յիշեալ վանքը՝ հետզհետէ ժողովեց իւր մօտ իրան հետևողներ, նպատակ դնելով ծաղկեցնել հայ գրականութիւնը հին հեղինակների հրատարակութեամբ։ Միւս վանքն է Վիեննայի Մխիթարեան վանքը, որ հաստատել են Վենետկի միաբանութիւնից բաժանուած միաբանները. այս վանքն էլ հայ հին գրականութեան համար մի ուսումնավայր է։

Վ Ե Ր Ջ

Յ Ա Ն Կ

Երես

Մի քանի խօսք գրքոյկիս լոյս ընծայելու առիթով 5

Շ Ր Ջ Ա Ն Ա.

Քրիստոնէական Եկեղեցին Առաքեալների ժամանակ։

—

1. Քրիստոնէական եկեղեցու սկզբնաւորութիւնը.—Մաղաթիայի ընտրութիւնը և ս. Հոգւոյ գալուստը 7
2. Քրիստոնէութեան առաջին տարածումն Երուսաղէմում և եօթն սարկաւագների ընտրութիւնը 10
3. Քրիստոնէական եկեղեցու առաջին թշուառութիւնը.—Ս. Ստեփաննոսի նահատակութիւնը և հալածանքը հրեայ և հեթանոս ազգերից 12
4. Պողոսի դարձը և քրիստոնէութեան տարածուելը Սամարիայում և Կեսարիայում . 15
5. Պողոս առաքեալի ճանապարհորդութիւնը և նրա հիմնած եկեղեցիները 20
6. Յիսուսի միւս առաքեալների վախճանը . . 23

Շ Ր Ջ Ա Ն Բ.

Երես

Հայոց եկեղեցու համառօտ պատմութիւնը։

—

7. Քրիստոնէական հաւատի սկզբնաւորութիւնը Հայաստանում և նախկին լուսաւորիչներ.—ս. Ոսկեանց և Սուքիասեանց նահատակութիւնը 25
8. Հայաստանի երկրորդ Լուսաւորիչ ս. Գրիգորի ծնունդը.—Անակի Հայաստան գալը և ս. Գրիգորի Խոր վիրապ ձգուելը . . 31
9. Ս. Հռիփսիմեանց Հայաստան գալը և ս. Գրիգորի վիրապից դուրս ելնելը . . . 35
10. Ս. Լուսաւորչի տեսիլքը և Հայաստանի Հայրապետ ձեռնադրուելը 39
11. Ս. Գրիգորը մկրտում է Տրդատին և նրա ընտանեաց.—Ս. Էջմիածնի շինութիւնը և Հայաստանի լուսաւորութիւնը . . . 42
12. Լուսաւորչի առանձնակեաց կեանքը.—Արիոսի մոլորութիւնը և ս. Գրիգորի մահը. 45
13. Ս. Խաչի գիւտը Հեղինէ թագուհու բարեպաշտ ջանքով 48
14. Ս. Գրիգոր Լուսաւորչի յաջորդները՝ ս. Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ և Դանիել կաթողիկոսները 50
15. Մեծն Ներսէս, նրա մեծագործութիւնները և վախճանը.—Կ. Պոլսի ս. ժողովը . . 54

Շ Ր Ջ Ա Ն Գ.

16. Ս. Սահակ Պարթև, սրա գործունէութիւնը Հայ եկեղեցու պայծառութեան և ժողովրդի մտաւոր զարգացման օգտին.—Ս. Մեսրոպ Մաշտոց.—Հայկական տառերի գիւտը և ս. Գրքի թարգմանութիւնը. 61
17. Տիեզերական ժողովներ 69
18. Կրօնական պատերազմ Հայոց և Պարսից մէջ.—Ատովմեանց նահատակութիւնը.—Պարսից Յազկերտ թագաւորի ջանքը՝ իւր հպատակ քրիստոնեաներին կրակապաշտ դարձնելու 72
19. Աւարայրի պատերազմը և ս. Վարդանանց և Ղևոնդեանց նահատակութիւնը . . . 82
20. Մեր եկեղեցու նշանաւոր կաթողիկոսները Ե-րդ դարում. 86
21. Քրիստոսի դաստառակի յայտնութիւնը և փոխադրութիւնը Եդեսիա քաղաքից Կ. Պոլիս. 89
22. Ս. Խաչի գերութիւնը Պարսկաստան և վերադարձը.—Վարազայ ս. Խաչի յայտնութիւնը 92
23. Ներսէս Շնորհալի. 94
24. Գրիգոր Տղայ և Ներսէս Լամբրոնացի . . 98

Շ Ր Ջ Ա Ն Դ.

19-ՐԴ դարի մեր կաթողիկոսները

—

25. Յովսէփ արք-եպիսկոպոս Արղութեան և Եփրեմ կաթողիկոսները 103
26. Յովհաննէս Ը. Կարբեցու կաթողիկոսութիւնը և Հայոց եկեղեցու վարչութեան կազմակերպութիւնը Ռուսաստանում. . 106

Երես

27. Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսը . . 109
28. Մատթէոս և Գէորգ կաթողիկոսները և հոգևոր հաստատութիւններ Տաճկաստանում և Պարսկաստանում. 113
29. Մակար կաթողիկոսը և Աղգիս ներկայ Հայրապետ Մկրտիչ Հայրիկ 118

30· Հայոց նշանաւոր վանքերը 120

ՎՐԻՊԱԿՆԵՐ

				Տպուած է.	Պէտք է լինի.
Երես	7	տող	1 ներքևից	Հեթանոսնե՛ի	Հեթանոսների լոյս
„	10	„	2 վերևից	ղէմում	ղէմում
„	43	„	11 „	գտվում	գտնվում
„	58	„	1 ներ.	գործա-	գահա-
„	73	„	7 „	դառնան	կը դառնան
„	85	„	1 „	կռակապաշտ.	կրակապաշտ.
„	88	„	12 վեր.	հան-	յան-
„	90	„	4 „	որի	որմի
„	93	„	5 „	կաբարելով տօն,	՝կատարելով, տօն
„	108	„	6 ներ.	աւագ	աւագ քահ. երկու

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅՍՀ—СССР
им. А. Мраморяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գրքոյկս ունենալ ցանկացողները պէտք է դիմեն „Կենդրոնական“ և „Գուտտենբէրգ“ գրավաճառանոց-ներին կամ կազմողին հետևեալ հասցէով՝

Тифлисъ, Бебутовская улица, д. № 50.
Протоіерею Оганесу Мартиросянцъ.

ԳԻՆՆ Է 35 կ.
Ճանապարհածախսով՝ 40 կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0165309

28(=91.54)(09)
U-38